

րողէ այդպէս կանգնած մնացի, բայց նրա արարողապետը բռնելով իմ ուսից, մի կողմ հրեց ինձ և հրամայեց իսկոյն հեռանալ:

— Ապա փո՞ղս, հարցրի ես:

— Ի՞նչ է ասում այդ մարդը, հարցրեց շահագողէն. կօշիկդ զարկի՞ր դրա բերանին. զարկի՞ր, եթէ նա կը համարձակուի կրկին խօսել:

Գեռ այս հրամանը չարտասանուած՝ արարողապետը մի-երկու անգամ իր մաշիկի կրունկով զարկեց բերանիս՝ ասելով.

— Դու համարձակում ես մի արքայորդու առջև սոյդ ձեռով խօսել: Շուտ ձայնդ կտրի՞ր ու հեռացիր. եթէ ոչ այս րողէիս ականջներդ կտրել կը տամ:

Ծառաներն ինձ աքացելով, հրելով ու քարշ տալով՝ հեռացրին շահագողէի մօտից:

Յուսահատ սրտով ես վերադարձայ մեր ջորեպանի մօտ, որին պատմեցի գլխիս եկածը: Նա իսկի էլ չզարմացաւ և ասաց.

— Դրանից աւելի էլ ի՞նչ էիր կարող սպասել: Բաւական է որ նա շահագողէ է, էլ ի՞նչ ես կարող անել, կամ սպասել նրանից: Իու կարծում ես որ մի բան այդպիսիների ձեռքն ընկնելուց յետոյ այլևս դժուրս կը դայ: Եթէ մի ջորու բերանից խոտը դուրս քաշել կը լինի, իմացիր որ մի շահագողէից էլ կարելի է ետ առնել այն՝ ինչոր նրա ձեռքն է ընկել:

ԳԼ. Թ.

Հացի Բարան այնքան դժբախտանում է, որ ստիպւում է սողկայունիւն* յանել:

Վերջապէս մենք հասանք Մէշհէդ: Շահագողէն մեծ փառքով մուտ գործեց քաղաքը: Ես մնացի մենակ, օտար, անծանօթ: Ես միայն 5 թուման փող ունէի որ Սպահանի արքունական քարվանսարայից գողացածս քսակից վերցրել և թազցրել էի գլխարկիս աստառի տակ:

Մինչև Մէշհէդ իմ ուռելիքի ծախքը իմ բարեկամ ծեր ջորեպանի վրայ էր, սակայն հիմայ որ նա այլևս շահագողէի ծառայութեան մէջ չէր, ես ամաչում էի ծանրանալ նրա վրայ:

Մտածեցի սափրչութիւն անել. բայց ո՞վ կը վստահանար իր կողորդը կամ գլուխն ենթարկել իմ ձեռքի գործողութեանը,

*) Սողկա նշանակում է ակերով ջուր կրող կամ ծախող:

քանի որ Մէշհէդում ինձ թիւրքմէն լրտես էին համարում: Բացի դրանից, ես թէպէտ կարող էի 5 թումանով մի ածելի և մի քանի հարկաւոր գործիքներ գնել, սակայն մի խանութ բանալու համար այդ փողը չէր բաւականանալ:

Իմ բարեկամ Ղորեպանը որ շատ լաւ ծանօթ էր մէշհէդ-ցիներին կեանքի հետ, խորհուրդ տուեց ինձ սաղկայութիւն անել:

Շուու մի առոյգ և ուժեղ երիտասարդ ես, ասաց նա, լաւ ձայն էլ ունես և քո ձայնով դու կարող կը լինես շատ մուշտարիներ գրաւել: Բացի դրանից, դու լաւ ձիրք ու շնորհք ունես մարդկանց շողոքորթելու և խաբելու: Դու գիտես որ բազմաթիւ ուխտաւորներ են գալիս այստեղ, և գիտես նաև որ նրանք լաւ համողուած են, թէ իրանց հողին փրկելու միակ միջոցն է՝ բարեգործութիւն անել: Ամեն մի գաւաթ ջուր որ մարդկանց կը տաս, յանուն Իմամ Հոսէյնի տուր: Միշտ ձեացըրու իբր թէ ձրիապէս ես տալիս, բայց զգուշացիր որ նախ փողն առնես, յետոյ գաւաթը տաս խմողի ձեռքը: Եւ երբ մուշտարիդ խմում, վերջացնում է, բարձրաձայն ասա՝ «խմածդ ջուրը խաղաղութիւն և աջողութիւն պարգևէ քեզ, Օրհնեալ Հոսէյնի պէս երբէք ծարաւ չքաշես», և այսպիսի խօսքեր, միայն թէ անշուշտ այնպէս բարձր ու պարզ ձայնով պիտի արտասանես որ մարդիկ բոլորն էլ լսեն:

Վերջապէս դու միշտ քաջալերական ու մխիթարական խօսքեր պիտի ասես ուխտաւորներին, և վստահ եղիր որ բոլորը կը հաւատան խօսքերիդ: Ես ինքս մի ժամանակ սաղկայ էի, և լաւ գիտեմ թէ այդ գործը ինչպէս պէտք է առաջ տարած: Հէնց այդ գործով ինձ յաջողուել է մի շարք ուղտեր գնել և լինել այն, ինչոր այս բոպէիս դու տեսնում ես ինձ:

Ես յարգեցի բարեկամիս խորհուրդը և անմիջապէս գնեցի մի տիկ և մի պղնձէ գաւաթ: Տիկը մի-երկու օր ջրի մէջ թրջեցի, որպէսզի կաշու հոտը անցնէր, և երրորդ օրը լցնելով նրան՝ ուսս ձգեցի և գնացի դէպի Իմամի Գերեզմանը:

— Զո՛ւր, ջո՛ւր, յանուն Իմամի ջո՛ւր, բոռացի ես այնքան բարձրաձայն, որ քիչ էր մնում թոքերս վնասուէին: Մէշհէդի միւս սաղկաները սկսեցին հետաքրքրուել թէ ես ո՞վ էի և ինչ իրաւունք ունէի սաղկայութիւն անելու: Մի անգամ երբ ջրամբարից տիկս ջուրս էի լցնում, նրանք աշխատեցին չթողնել: Նըրանցից մէկը մինչև անգամ փորձեց ջրամբարի մէջ գլորել ինձ, բայց երբ տեսաւ որ ես վճռել էի գործս առաջ տանել, և որ ինձ հետ գլուխ-գլխի չէին կարող գնել, ետ քաշուեցին և մի քանի յիռոցներ տալով ինձ՝ հեռացան: Սակայն ապիկարները չգիտէին որ յիռոցներին մէջ՝ ես իրանցից շատ աւելի վարժ

էի: Յիշոցները այնպիսի սաստիկ կարկուտ թափեցի նրանց գլխին որ նրանք ձայները կտրեցին և այլևս փորձ չարին խանդարել ինձ:

Կարծես թէ ես ստեղծուել էի սաղկայութիւն անելու: Տիկն ուսս էի ձգում մի թեթև պարկի պէս և քայլում էի հսկայի պէս: Ես միշտ ջուր էի վերցնում մի կեղտոտ ջրամբարից. սակայն մարդկանց այնպէս էի հաւատացնում որ իբր թէ իմ տկի ջուրը վերցրուած էր իսկ Ալիի ձեռքով փորուած աղբիւրից, որ իր բոլոր յատկութիւններով հաւասար էր դրախտի միջից անցնող դետի մի ճիւղի և Ջէմզէմի սուրբ հորի ջրերին: Օ՛, մարդիկ ինչպէս էին հաւատում ինձ և ի՞նչ առատաձեռնութեամբ փոխարինում ինձ ձրիապէս մատակարարածս ջրի համար:

Ես միշտ աշխատում էի նորեկ ուխտաւորների մօտ դնալ, և երբ առաջին անգամ նրանց հանդիպում էի, իսկոյն մի գաւաթ ջուր էի հրաւիրում և յանուն Մարգարէի նրանց հաւատացնում, որ դրա ընդունելն ու խմելն ու դրա համար վարձատրութիւն անելը մի սրբազան պարտք էր, որ իրանք պէտք է կատարէին իբրև ուխտաւոր: Նրանք հաւատում էին և առատ կերպով վարձատրում ինձ, իբրև Հոսէյնի գերեզմանին սպասաւորող մի սաղկայի:

Իմամ՝ Հոսէյնի մահուան տարեդարձը մօտենում էր: Ես վճռեցի սերտել և կատարել այն սաղկայի դերը, որ Հոսէյնի ողբերգութեան մէջ պատասխանատու տեղ է բռնում: Այս ողբերգութիւնը պիտի ներկայացուէր շահադէի պալատի առջև ընկած հրապարակի վրայ: Ես մեծ յոյս ունէի անուն վաստակելու իմ ուժի շնորհիւ որ իբրև սաղկայ պիտի ցոյց տայի: Ինձ նախանձախնդիր հանդիսացաւ մի սաղկայ որ վերջին անգամ կտտարել էր այդ դերը. սակայն երբ մարդիկ տեսան որ իմ տիկը համեմատաբար շատ մեծ է, նախադաս համարեցին ինձ:

Մարդիկ ինձ խորհուրդ տուին միշտ զգուշանալ այդ մարդից՝ ստելով, թէ նա մի շատ նախանձոտ ու քինախնդիր մարդ է և ամեն ջանք գործ կը դնէ մի կերպ վնասելու ինձ:

Հասաւ ներկայացման օրը: Շահադէն հստեց իր պալատի մեծ դրան վերևի պատշգամբում, և ամբոխը հաւաքուեց հրապարակի շուրջը: Ես հանդէս եկայ կիսամերկ, ծանր-ծանր քայլելով, մեծ տիկը ուսիս, մարմինս էլ արիւնաթաթախ: Հասնելով պատշգամբի տակ՝ ես սկսեցի բարձր ձայնով երջանկութիւն, յաջողութիւն և երկար կեանք մաղթել շահադէին, որը հաճեցաւ վայր ձգել մի ոսկի ինձ համար: Ես այնքան ու-

բախացայ և քաջալերուեցի, որ մի քանի երեխաների հրաւիրեցի նստել իմ տկի վրայ, և երբ նրանք նստեցին՝ ես տարայ նրանց առանց սայթաքելու, այնպէս որ մեծ զարմանք պատճառեցի բոլոր հանդիսականներին:

— *Բարիքէլլա՛, բարիքէլլա՛* (բրնօ, բրնօ) ասացին բոլորը միաբերան:

Աւելի խրախուսուելով այս բառերից՝ ես հրաւիրեցի մի ուրիշ տղայի էլ նստել տկիս վրայ միւսների հետ միասին: Իմ նախանձորդը, որ մօտս կանգնած էր և առթի էր սպասում, յանկարծ ցատկեց տղաների վրայ և աշխատեց ջախջախել ինձ: սակայն բոլոր ուժերս հաւաքելով՝ ես անյողդողդ տարայ բոլորին էլ:

Թէպէտ տաքացածս ժամանակ ոչինչ ցաւ չզգացի, սակայն երբ բռնս վայր դրի, նոր զգացի որ մէջքս սաստիկ կերպով վնասուել էր: Ցաւս այնքան սաստկացաւ, որ ես միանգամայն անկարող ելայ շարունակելու սաղկայութիւնը: Ստիպուած՝ ծախեցի տիկս և մնացի անդործ, ծախսելով սաղկայութեամբ վաստակած փողերս: Իմ բարեկամ ջորեպանն էլ Հոսէյնի տօնից յետոյ հեռացել էր Մէշէդդից, և այժմ ես ոչ մի խորհրդատու բարեկամ չունէի:

Մի բոպէ ես մտածեցի դատ բանալ իմ նախանձորդի դէմ, սակայն իսկոյն յիշեցի, որ անօգուտ կը լինէր, «որովհետև մահմեդական օրէնքով՝ այնպիսի վնասի համար, ինչպիսին ես էի կրել՝ ոչ մի փոխարինութիւն չէ լինում: Միայն զրուած է՝ աչքի տեղ՝ աչք, ատամի տեղ՝ ատամ, բայց ոչ մէջքի տեղ՝ մէջք»:

Եթէ ես մի հզօր պաշտպան ունենայի, գուցէ ինձ կը յաջողուէր պատժի կամ տուգանքի ենթարկել հակառակորդիս. բայց ի՞նչ անէր ինձպէս մի տարաբախտ, օտար, անբարեկամ արարած: Ո՞վ գիտէ, գուցէ բացի դատս անյաջող տանելուց՝ իմ ունեցած փողն էլ որ շան չարչարանք կրելով վաստակել էի, ձեռքիցս գնար:

—

ԳԼ. Ժ.

Հայի Բարան շրջիկ ծխախոտավաճառ է դառնում:

Երկար ու բարակ մտածելուց յետոյ ես եկայ այն եզրակացութեան, որ Մէշէդդում ապրուստս հայթհայթելու ամենալաւ միջոցը՝ մուրացկանութիւնն էր, և սաղկայութեանս

փորձերից ես լաւ գիտէի որ այդ գործի մէջ ես լաւ կը յաջողուէի:

Կարող էի մի արջ պահել և լուծիուծիւն *) անել. բայց դրա համար ինձ հարկաւոր էր երկար ժամանակ աշակերտութիւն անել: Մէկ էլ մտածեցի սափրիչի խանութ բանալ, սակայն ես չէի կարողանում համոզել ինձ՝ մնալ այնպիսի մի հետու քաղաքում, ինչպէս Մէշհէղում:

Ի վերջոյ վճռեցի շրջիկ ծխախոտավաճառ դառնալ: Շուտով գնեցի զանազան չափերի չիբուխի կոթեր ու գլուխներ, որոնց մի հաստ փայտէ թաքաղի մէջ շարելով՝ թոկերով կապեցի մէջքիցս: Յետոյ երեք բարակ շղթաներից կախուած մի երկաթէ կրակաման ձեռքումս բռնելով, մի զոյգ ունելիք գօտուս մէջ անցկացնելով, մի պղնձէ ջրաման գօտուցս կախելով և մի քանի քսակ ծխախոտ ուսերիս ձգելով—այդ բոլորով ես մի կատարեալ ծխախոտավաճառ դարձայ և նմանուցի փշերը բիզբիզ ցցած մի ոգնու:

Իմ ծխախոտը զանազան տեսակից էր—Թաբայի, Շիրազի և Դամասկոսի: Ծիշտը խոստովանած՝ իր երբէք մաքուր ծխախոտ չէի ծախում որովհետև մի քանի հարազատ տերէնների հետ խանութով ահագին քանակութեամբ էլի կամ ձիու չորացրած աղը՝ պատրաստում էի մի քանի քսակ ծխախոտ:

Իմ մուշտարիներից նրանց՝ որոնք լաւ ծխախոտ ճանաչող էին, ես ստիպուած առաջնակարգ տեսակի ծխախոտ էի տալիս: Միջնակարգ մարդկանց՝ կիսախառն էի տալիս, իսկ ստորին դասակարգի ծխողներին՝ համարեան թէ ամբողջովին ձիու կամ էլի աղը էի տալիս:

Իմ ամենագլխաւոր մուշտարին մի դէրվիշ էր որը անքան վարպետ էր ծխախոտ ճանաչելու մէջ, որ ես երբէք չէի համարձակուում անմաքուր ծխախոտ տալ նրան: Թէև նրանից մեծ շահ չէի ստանում, որովհետև նա շատ անգամ ուշացնում էր իր հատուցումը, այնուամենայնիւ նրա խօսքերն այնքան դուրեկան և քաղցր էին ինձ, և բացի դրանից, նա անքան մուշտարիներ էր ճարում ինձ համար՝ որ ես կամաց-կամաց սկսեցի սիրել ու համակրել նրան:

Դէրվիշ Սաֆարը—այդ էր անունը—մի առանձին կերպարանքի տէր մարդ էր: Նա մի մեծ արծալին քիթ ունէր, խորաթափանց սև աչքեր, խիտ մօրուք և երկար մազեր որ խա-

*) Լուծիուծիւնը արտօնեալ խեղկատակութիւն է: Լուծիւնը պահում են արջ, կապիկ և ուրիշ կենդանիներ որոնց զանազան խողեր են սովորեցնում և նրանցով փող աշխատում:

դում էին իր ուսերի վրայ: Նրա կոնաձև գլխարկի շուրջը ասեղնագործ տառերով գրուած էր դորանից զանազան խօսքեր: Մի կարմիր եղջերուի մորթի կախուած էր նրա ուսերից: Մի ձեռքում ունէր մի երկար ցուպ, որ նա սովորաբար ուսի վրայ դրած էր տանում, միւս ձեռքումը՝ երեք շղթաներից կախուած մի քաշքուշ որ իր ցանկացած ժամանակ դէմ էր բռնում անցնորդներին նուէր խնդրելու նպատակով: Նրա գօտուց կախուած էր մի թէւքի, և երբ նա ճօճուելով ման էր գալիս, նրա դէմքի և շարժման մէջ այնպիսի կատաղութիւն ու հաւորութիւն էր երևում, որ մադիկ երկիւղածութեամբ էին վերաբերվում դէպի նա:

Դէրվիշ Սաֆարի հետ շուտով մտերմացայ: Մի օր նա ինձ ներկայացրեց իր ընկերներին որոնց հետ նա ապրում էր անբաժան: Մի օր էլ նա հրաւիրեց ինձ ներկայանալ իրենց ժողովներին: Մի-երկու անգամ ներկայացայ և փորձով տեսայ, որ այդ ժողովներին մասնակցելու շատ թանգ էր նստում ինձ վրայ, որովհետև իմ ծխախոտի մեծ մասը դէրվիշներն էին ծխում: Այնուամենայնիւ նրանց ընկերակցութիւնը այնքան հաճութիւն ու զուարճութիւն էր պատճառում ինձ, որ ես ձեռք քաշելով ծխախոտիցս՝ ներկայանում էի նրանց ժողովներին:

Մի երեկոյ, երբ Սաֆարը սովորականից աւելի էր ծխել և երևի լաւ տրամադրութեան մէջ էր, ինձ ասաց.

— Հաջի Բարան, շատ ափսոս է որ քեզ պէս մարդ ամբողջ իր կեանքն անցկացնի ծխախոտավաճառութեամբ: Ինչո՞ւ դու էլ մեզ պէս դէրվիշ չես դառնում: Մենք լաւ ենք ձեռք առնում մարդկանց մօրուքները: Մարդիկ մեզ համար լաւ որսեր են: Նրանց ապիկարութիւնից և դիւրահաւատութիւնից մենք շատ ենք օգտուում: Մի խօսքով, եթէ մարդիկ այդպէս չլինէին, մենք չէինք կարող հայթհայթել մեր ապրուստը: Ես կարծում եմ որ դու հասկացել ես թէ ինչ է մեր գործը: Կարծում եմ նաև, որ դու էլ կը մասնակցես մեզ և ժամանակով այնքան հոշակ կը վայելես՝ ինչքան Շէյխ Սաադին էր վայելում:

Դէրվիշ Սաֆարի այս խօսքերը կրկնուեցին միւս դէրվիշների կողմից, և թէպէտ ես յօժարակամութիւն ցոյց տուի՝ նրանց հետ միանալու, սակայն ասացի.

— Ինչպէս է կարելի ինձպէս մի տգէտ և անփորձ մարդու սովորել այն բոլոր ուսմունքը որ հարկաւոր է մի դէրվիշի համար: Ծղմարիտ է, ես գրել ու կարգալ գիտեմ, ամբողջ դորանը կարդացել եմ, Հա՛, Կո՛ ու Սաադին գրեթէ ամբողջ անգիր գիտեմ, բացի դրանց՝ ց, ես կարդացել եմ և՛ Ֆէրդու-

սիի Շահնամէի մեծագոյն մասը, սակայն դրանցից դուրս՝ ես ուրիշ ոչինչ չգիտեմ:

—Ա՛հ, բարեկամս, ասաց դէրվիշ Սաֆարը, դէրվիշներէ կեանքից դու շատ քիչ բան գիտես, և աւելի քիչ բան գիտես մարդկային կեանքից: Դէրվիշ լինելու համար մեծ ուսում ու գիտութիւն հարկաւոր չէ. բաւական է ունենալ մի քիչ համարձակութիւն և վստահութիւն մարդկանց յիմարացնելու համար: Քո այդ կարգացած ու սովորած բաների մի հինգերորդովը, ես վստահ եմ, քեզ կը յաջողուի մեծ դէրվիշ դառնալ: Ես իմ աներեսութեամբ և յանդգնութեամբ կարողացել եմ հըրաջքներ գործել, մահամերձ հիւանդներին առողջացնել, և այժմ, մի խօսքով, մեծ հանգստութիւն եմ վայելում և մեծապէս յարգւում եմ բոլոր մարդկանցից որոնք, ինչպէս դու, չը գիտեն թէ դէրվիշներն ինչեր են: Ես հաւատացնում եմ քեզ, որ եթէ ես էլ կամենայի կամ աշխատէի իմ անձն ենթարկել ան վտանգներին, որոնց Մոհամէդ ինքն իրան ենթարկեց, ես էլ կարող կը լինէի մարգարէ համարուել: Ես ամենայն հեշտութեամբ կարող կը լինեմ Մոհամէդի պէս լուսինն իմ մատով կիսել: Այդպիսի հրաջը գործելու համար հարկաւոր է համարձակութիւն և խորամանկութիւն որպէսզի մարդ կարողանայ յիմար ժողովրդին աւելի յիմարացնել ու կուրացնել:

Երբ Սաֆարը վերջացրեց իր խօսքը, նրա ընկերներն սկսեցին պատմել ինձ այնպիսի զարմանալի բաներ իրանց քաջագործութիւնների մասին, որ ես բուռն ցանկութիւն զգացի աւելի մօտից ծանօթուել այս արտաքոյ կարգի մարդկանց հետ: Նրանք խոստացան եկող ժողովում պատմել ինձ իրանց կեանքերի մասին: Միևնոյն ժամանակ, նրանք խորհուրդ տուին ինձ իմ ամբողջ մտածմունքը դարձնել այնպիսի մի կեանքի վրայ որ փողոցներում թափառող մի ծխախոտավաճառի կեանքից շատ աւելի բարձր ու երջանիկ է:

ԳԼ. ԺԱ.

Դէրվիշ Սաֆարի եւ իր ընկերների պատմութիւնները:

Մի երեկոյ երբ մենք ժողովուել էինք Դէրվիշ Սաֆարի շուրջը՝ իւրաքանչիւրիս ձեռքում մի չիբուխ և մէջքներս դէմ տուած սենեակի պատերին, նա սկսեց իր պատմութիւնն այսպէս.

«Ես Շիրազի իշխանի Լուկ բաշու որդին իմ, ծնուած

մի պոռնիկ մօրից որի անունն էր Թաւուս (սիրամարգ)։ Դուք կարող էք լաւ երևակայել, թէ այսպիսի ծնողներից ինչ կըրթութիւն կարող է ստանալ մի զաւակ։ Մանկութեանս հասակում իմ գլխաւոր ընկերներն էին՝ հօրս և իր ընկերների կապիկներն ու արջերը. և գոցէ այդ կենդանիներից, սովորած խաղերից ու օյիններից օգտուելով էր՝ որ ես կարողացել եմ կեանքումս այնքան միմոսական խաղեր խաղալ։

«Տաննէինդ տարեկան հասակումս ես արդէն կատարելագործուած մի լուծի էի։ Ես կարողանում էի կրակ ուտել, բերանիցս ահագին քանակութեամբ շուր դուրս թափել և վերջապէս կատարել ամեն տեսակ ձեռնածուծութիւններ։ Հաւանականաբար ես կը շարունակէի այդ գործը և լաւ էլ առաջ կը տանէի, եթէ Շիրազի իշխանի զօրապետի աղջիկը չսիրահարուէր ինձ վրայ։

«Զօրապետի իշխանութեան ներքոյ գտնուող մի երիտասարդ մի քոյր ունէր որ ծառայում էր նրա հարեմում։ Այդ երիտասարդն իմ ամենամտերիմ բարեկամն էր։ Նա կարողանում էր իր քրոջից տեղեկանալ, թէ իմ անձնաւորութիւնն ինչ տըպաւորութիւն էր թողել իր աղայի աղջկայ վրայ։ Նրա հաղորդած լուրերն այնքան քաջալերական էին, որ ես մի օր գնացի մի միրզայի (գրագիր) մօտ և խնդրեցի նրանից մի պատուական սիրահարական նամակ գրել։ Միրզան գրեց նամակ կարմիր թանաքով, նախ թերթի աջ կողմից դէպի ձախ, յետոյ երկայնութեան կողմից, յետոյ անկիւնից անկիւն, խաչաձև։ Նամակն այնպէս սքանչելի կերպով էր շարադրուած որ իմ սիրունին դեռ նրա կէսը չկարդացած՝ պիտի կարծէր թէ ես արդէն մեռել էի, և թէ իմ մահուան պատճառն՝ իր աչքերի ցայտած կրակն է եղել որ խորովել էր սիրտս։

«Մտիս ուրախութիւնից ես յայտնեցի միրզային թէ իմ սիրունին ո՞վ էր։ Նա յուսալով մի մեծ պարգև ստանալ իր գրած նամակի համար, իսկոյն գնաց և յայտնեց եղելութիւնը հէնց զօրապետին իրան։

«Մի լուծի-բաշու կողմից յանդգնել, համարձակուել մի զօրապետի աղջկայ վրայ նայել իբրև սիրուհու—օ, դա մի աններելի յանցանք էր։ Եւ որովհետև այդ զօրապետը մի ազդեցիկ անձնաւորութիւն էր, ուստի նա շուտով հրաման հանեց պալատից, որ ինձ անմիջապէս արտաքսէին Շիրազից։

«Հայրս վախենալով որ մի գուցէ իմ պատճառով ինքն էլ Շիրազի իշխանի աչքից ընկնէր, և նաև լաւ գիտենալով որ իմ ճարպիկութեամբ ես շուտով մրցակից կը լինէի իրան, շտապեցրեց ինձ արտաքսելը։

«Շիրազից հեռանալուս առաւօտը, երբ մնաս բարով էի
ասում իմ բարեկամ կապիկներին և արջերին, հայրս ասաց ինձ.

— «Սաֆար, որդիս, ես ցաւում եմ որ դու բաժանուում ես ին-
ձանից. բայց այն կրթութիւնը որ ես քեզ տուել եմ, և այն ըն-
կերակցութիւնը որ դու վայելել ես իմ կենդանիների շրջանում,
անտարակոյս մեծ յաջողութեան դուռ պիտի բանայ քեզ հա-
մար քո ապագայ կեանքում: Այժմ ես պարգևում եմ քեզ իմ
ամենալաւ կապիկը որ ամենակատարեալն է իր տեսակի մէջ:
Լաւ բարեկամացիր սրա հետ և սիրիր սրան իմ խաթրու հա-
մար: Ես յոյս ունեմ որ ժամանակով դու պիտի հասնես նոյն
բարձրութեան, որին հասել է հայրդ:

«Այս խօսքերը վերջացնելուց յետոյ, նա կապիկը դրեց
ուսիս վրայ, և ես հեռացայ եմ հայրական տնից:

«Ես ճանապարհ ընկայ դէպի Սպահան: Զգիտէի թէ
արդեօք իմ կեանքի մէջ այս առաջին փոփոխութիւնը երջա-
նիկ, թէ՞ թշուառ պիտի դարձնէր ինձ: Ունենալ մի կապիկ,
վարել մի անկախ կեանք, դա անշուշտ շատ ուրախալի բան էր.
Բայց թողնել ընկերներին, հեռանալ իմ սիրելի բարեկամնե-
րից, հեռանալ, աւաղ, այն... այն գեղեցկուհուց, որին երևակա-
յութեանս մէջ պատկերացնում էի իբրև Շիրինն ինքը,—օ,
դրանք այնպիսի տխուր և վշտացուցիչ հանգամանքներ էին,
որ տանջում էին ինձ:

«Տխուր, տրտում ու յուսահատ սրտով ես շարունակեցի
ճանապարհս, մինչև հասայ Թէնզի Ալլահ Աքբար, որտեղ
կանդ առայ մի խրճիթի մօտ, որի մէջ բնակուում էր մի
դէրվիշ: Խրճիթի մօտ ընկած մի մեծ քարի վրայ նստեցի. կա-
պիկս էլ նստեց իմ կողքին, և ես ընկայ խոր մտածմունքի
մէջ: Մի քանի ըրպէից յետոյ աչքերս լցուեցին աղի արտասու-
քով, և ես բացազանչեցի՝ ախ, ախ: Դէրվիշը լսելով ձայնս՝
դուրս եկաւ ինձ մօտ: Ես մի քանի բառով պատմեցի նրան իմ
մասին, նա հրաւիրեց ինձ մտնել իր խրճիթը: Ես մտայ: Այս-
տեղ կային մի քանի ուրիշ դէրվիշներ աւելի դաժան դէմքերով
քան ինքը: Ինձ ներս հրաւիրող դէրվիշը հագնուած էր մօտա-
ւորապէս այնպէս, ինչպէս այս ըրպէիս հագնուած եմ ես, և,
յիրաւի, այս գլխարկը հէնց նրանն է: Նրա դէմքը այնպիսի
սոսկալի կատաղութիւն էր արտայայտում, որ մարդ նրան
նայելիս՝ սարսափում էր: Երբ նա տեսաւ իմ կապիկին, կար-
ծես թէ մի բան յանկարծ անցաւ իր մտքով, և մի քանի
վայրկեան միւս դէրվիշների հետ առանձին խօսելուց յետոյ
ասաց ինձ.

— «Ես գնում եմ Սպահան և ցանկանում եմ որ դու էլ

ընկերակցես ինձ: Խոստանում եմ բարի լինել դէպի քեզ, և եթէ դու լաւ կը վարուես՝ ես քեզ մեծ բախտի կը տիրացնեմ:

— «Համաձայն եմ, պատասխանեցի ես:

«Մի դայլան ծխելուց յետոյ մենք ճանապարհ ընկանք դէպի Սպահան: Դէրվիշ Բեդիւնը— այդ էր նրա անունը— սկսեց հարց ու փորձ անել ինձ իմ անցեալ կեանքի մասին: Ես պատմեցի նրան ամեն բան:

«Նա բացատրեց ինձ դէրվիշական կեանքի օգուտները, ապացուցանելով որ դէրվիշութիւնը շատ աւելի պատուաւոր պարապմունք է քան լուծիութիւնը: Վերջապէս նա համոզեց ինձ դէրվիշ դառնալ:

— «Լսիր, ասաց նա, եթէ դու ինձ վրայ կը նայես իբրև մի ուսուցչի, ես կը սովորեցնեմ քեզ ամեն բան որ ես գիտեմ, և դու պիտի հաւատաս, որ իմ իմացածը մեծ գիտութիւն է, որովհետեւ ես այս բոլորիս ամենակատարեալ դէրվիշն եմ համարում ամբողջ Պարսկաստանում:

«Նա սկսեց զրոյցներ տալ կախարդութեան և աստղագիտութեան մասին, և տուեց ինձ մի քանի դիւթագրերի օրինակներ, հաւատացնելով ինձ որ այդ և այդպիսի թղթերով ինձ կը յաջողուէր շատ փող վաստակել կեանքի ամեն պարագայում:

— «Գիտես, եթէ մի ճագարի պոչ դնես մի երեսայի բարձի տակ, ասաց նա, երեսայի վրայ սաստիկ ծանր քուն կը գայ, և եթէ ճագարի արիւնը մի ձիու խմացնես, նա արագավազ և երկարաշունչ կը լինի: Եթէ մի գայլի աչք կամ նրա ոտի ոսկորից մի կտոր կապես մի տղայի թևից, այդ տղան արիութիւն կը ստանայ, և եթէ նրա ճարպը կապուի մի կնոջ մարմնից, նրա ամուսնու սէրը կը պակասի: Եթէ գայլի լեղին տրորուի մի ամուկ կնոջ մարմնի վրայ, այդ կինը ընդունակ կը լինի զաւակ ծնելու: Բայց ամենաթանգագին բանը որ գործ է ածուում հարէջներում, էգ բորենուըն է, որ եթէ որևէ անձ կրէ իր մարմնի վրայ, նա կարող կը լինի իր ուզած անձի սիրտը գրաւել, նրան սիրահարեցնել իր վրայ:

«Վերջապէս դէրվիշ Բեդիւնը երկար խօսեց այս և այսպիսի նիւթերի վրայ, և երբ նա նկատեց որ իմ հետաքրքրութիւնը սաստիկ շարժուել է, հետևեալ առաջարկութիւնն արաւ ինձ.

— «Մաքնը, ասաց նա, դու չգիտես թէ այդ կապիկը ինչ մեծ գանձ է քեզ համար, բայց ոչ թէ կենդանի, այլ մեռած ժամանակը: Եթէ նա սաստիկ, ես այնպիսի նիւթեր եմ կարող քաշել նրա մարմնից հմայիլներ պատրաստելու համար, որ ի-

րանց կշռով ոսկի կը բերեն մեզ համար, մանաւանդ եթէ Շահի հարէմին ծախելու լինենք: Դու պիտի իմանաս, որ կապկի լեարդը, այն էլ յատկապէս այդ տեսակինը որ դու ունես, կարող է սիրահարեցնել մէկին մի ուրիշի վրայ: Ո՛վ որ այդ նիւթից ունենայ, կարող է ուղղակի դիւթել, ում որ կամենայ: Բացի դրանից՝ ո՛վ որ դրա քթի կաշին կախէ իր վզից, ո՛չ մի տեսակ թոյն չէ կարող ֆուսել նրան: Այդ կենդանու նոյնիսկ մոխիրը (երբ նրան այրես անգոր կրակի վրայ) եթէ չուտես, դու անմիջապէս կ'ունենաս կապկի բոլոր յատկութիւնները— խորամանկութիւն, ճարպկութիւն և այլն:

«Այս հրապուրիչ խօսքերից յետոյ դէրվիշը առաջարկեց մորթել իմ կապկին: Այս առաջարկութիւնը սարսափեցրեց ինձ, որովհետև մանկութիւնիցս ի վեր ես մեծացել էի նրա հետ, և մեր երկուսիս կեանքի թէ՛ յաջողութեան և թէ՛ ձախորդութեան ժամանակ մենք կարեկից ընկերներ էինք եղել: Պարզ էր ուրեմն, որ ես չէի կարող աչքերս բաց կանգնած տեսնել նրան բարբարոսաբար մորթուելիս: Ես պատրաստուում էի մերժել նրա առաջարկը, սակայն երբ յանկարծ նրա երեսին նայելով տեսայ որ մինչ ցարդ փպտացող նրա աչքերը գազանային կատաղութիւն էին արտայայտում, և վախենալով որ նա կարող էր բռնի կերպով առնել ինձանից այն՝ որին ես մեռնակ չէի կարող պաշտպանել, ուստի խոհեմութիւն համարեցի յակամայից թոյլ տալ նրան իրագործելու իր նպատակը:

«Մինչ այսպէս, մենք շեղուեցինք ճանապարհից և մրանելով մի ձորակ՝ երկուսս էլ վառելիք հաւաքեցինք և կրակ արինք: Դէրվիշ Բեդինը առանց դանդաղելու մորթեց կապկիս, կտրեց քթի կաշին, հանեց լեարդը և այրեց մնացորդը: Մի քանի ժամից յետոյ ամբողջը մոխիր դարձաւ: Նա հաւաքեց, իր թաշկինակի մէջ ածեց, և մենք դուրս եկանք ձորից:

«Շարունակելով մեր ճանապարհը, վերջապէս հասանք Սպահան: Այստեղ երբ լուր տարածուեց որ Դէրվիշ Բեդինը եկել է, նրա շուրջը հաւաքուեցին ամեն դասակարգի մարդիկ: Շատ մայրեր եկան, որոնք իրանց երեխաների համար պաշտպանութիւն էին խնդրում չար հոգու դէմ: Կանայք թալիսման էին ուզում՝ իրանց ամուսինների նախանձը դադարեցնելու համար... Բայց նրա դիւստոր մուշտարիները Շահի հարէմից էին: Նրանցից իւրաքանչիւրը ցանկանում էր ունենալ մի գորութիւն Շահի սէրը դէպի իրան գրգռելու:

«Այս բոլորի ցանկութիւններին յազուրդ տալու համար Դէրվիշ Բեդինը մեծ պաշար ունէր: Նա ունէր քաւթառի մագեր, բուլի ողնաշար և արջի ճարպ— բոլորը զանազան ձևերով պատը-

րաստուած: Հարէմի խանումներից մէկին՝ որ արդէն ծերացել էր և հետևապէս աւելի շատ էր թախանձում մի ճար գտնել գեղեցիկ ու գրաւիչ երևալու, նա ծախեց իմ կապկի լեարդը՝ հաւատացնելով նրան, որ եթէ նա իր անձի վրայ կրէր այն, անպատճառ կը յաջողուէր իրան Շահի սիրտը գրաւել:

«Մի ուրիշի, որ գանգատուում էր թէ Շահը իրան երբէք չէ սիրում, և ասում էր որ մինչև այժմ շատ հնարքների է դիմել, բայց չէ յաջողուել նրան գրաւելու, նա տուեց իմ այրուած կապկի մոխրից պատրաստուած մի բաղադրութիւն: Մի ուրիշի, որ ցանկանում էր՝ իր երեսին կնճիռներ չերևային, նա տուեց մի օժանելիք և ասաց. «Եթէ դու կանոնաւոր կերպով գործ ածես սրան և գործածածդ ժամանակ չծիծաղես, երեսդ միշտ այնպէս կ'երևայ, ինչպէս երևում է մի ջահիլ աղջկայ երես: Այս բոլորից յետոյ, թէև ես բաւական ծանօթացայ նրա գաղտնիքների հետ և շատ անգամ էլ օգնում էի նրան, սակայն նրա շահած դրամներից և ոչ մի սև փող իմ ձեռքը չընկաւ: Կապկիկ մորթուեց, Դէրվիշ Բեդինը հարստացաւ, իսկ ինձ մնաց՝ կապկիս, օ խեղճ, սիրելի կապկիս յիշատակը միայն:

«Վերջապէս դէրվիշ Բեդինի հետ ես շատ երկիրներ զընացի: Ամեն տեղ մենք մեր արհեստով հռչակուած էինք: Երբեմն մեզ պաշտում էին իբրև սուրբ մարդկանց, երբեմն էլ քարկոծում էին իբրև խաբեբաների: Մենք ճանապարհորդում էինք ոտքով. այդ պատճառով էլ ես բաւական ժամանակ էի ունենում մանրամասնութեամբ ուսումնասիրել ամեն բան որ ես տեսնում էի: Թէհրանից մենք գնացինք Պոլիս և այնտեղից Հալէպի ու Դամասկոսի վրայով անցանք Գահիրէ: Գահիրէից գնացինք Մէքքա և Մէդինա, և Ջիդդայում նաև նստելով՝ անցանք Գուջերաթի Սուրաթ քաղաքը: Այստեղից էլ գնացինք Լահոր ու Քաշմիր:

«Այս վերջին քաղաքում դէրվիշ Բեդինը ըստ իր սովորութեան սկսեց խաբել տեղացիներին, սակայն նրանք մեր պատառը չէին, որովետև նրանք մեզանից շատ աւելի լուսաւորուած մարդիկ էին: Քանի զեռ չէինք խայտառակուել, մըտածեցինք շուտ փախչել այդտեղից: Փախանք և գնացինք Հէրաթ, որտեղում ապրող աֆղանների տգիտութիւնն ու դիւրահաւանութիւնը փոխարինեց մեր այն կորուստը, որ ունեցել էինք Քաշմիրում:

«Այստեղ, մինչդեռ մենք ամենայն եռանդով պատրաստուած էինք հրաշքներ գործելու, դէրվիշ Բեդինը, այն, նա, որ անթառամ երիտասարդութիւն էր խոստանում մարդկանց, իր պարտքը վճարեց ընութեան: Մեռաւ նա:

«Մենեկուց առաջ նա բնակւում էր Հէրաթի մօտ գրտնուող մի լեռան վրայ, որտեղ նա մարդկանց հաւատացնում էր որ իբր թէ ապրում էր ջինների և փէրիների բերած կերակուրներով. սակայն դժբախտաբար նա մի գիշեր այնքան խորոված դառ ու քաղցրաւենիք անուշ արաւ, որ բնութիւնը մահով պատժեց նրան:

«Իմ վարկը չձգելու համար ես ստիպուեցի մարդկանց հաւատացնել, որ իբր թէ ջինները նախանձելով որ մենք մահկանացուներս վայելում էիք դէրվէջ Բեդինի պէս մի զարմանալի, մի հրաշագործ մարդու ընկերակցութիւնը, և կամենալով մեզ զրկել նրանից, մի գիշեր երկնառաք ուտելիքներով այնքան լցրին նրա փորը, որ նրա հոգին ազատ տեղ չգտնելով ապրելու նրա մարմնում՝ ստիպուել էր դուրս թռչել նրա կողորդից և մի ուժգին հիւսիս-արեւելեան քամու հոսանքով տարուել էր հինգերորդ երկինքը:

«Էէրվիշի յուզարկաւորութիւնը կատարուեց մեծ շքով: Հէրաթի իշխանը՝ Էշէկ Միրզան, նրա դազաղի մի ծայրը իր ուսի վրայ դրած՝ տարաւ մինչև գերեզմանը: Աֆղաններից մի խումբ բարեպաշտ մարդիկ մի փառաւոր յիշատակարան կանգնեցրին նրա գերեզմանի վրայ, որ մինչև այսօր ծառայում է իբրև ուխտատեղի:

«Իմ ուսուցչի մահից յետոյ ես մի քիչ ժամանակ մնացի: Հէրաթում վայելելու այն մեծ յարգանքն ու պատիւը, որ մարդիկ ակնածութեամբ տալիս էին ինձ՝ իբրև մի մեծ մարդու աշակերտի:

«Իմ թալիսմանագրերն և ուսուցչիս մօրուքի մազերը, որ սանտրուելու ժամանակ դուրս էին թափուել, նաև նրա կտրած եղունգները ծախելով իբրև սուրբ մարդու նշխարներ՝ ես բաւական փող ժողովեցի, թէպէտ ասածս մազերի և եղունգների մեծ մասը հէնց իմս էին:

«Հէրաթից հեռանալով և Պարսկաստանի զանազան տեղերից անցնելով, ես հասայ հէզարէ կոչուած ցեղի բնակավայրը, որ ընկած է Քարուլի և Կանդահարի մէջտեղը: Այս ցեղի մէջ իմ սպասածից աւելի յաջողութիւն ունեցայ, որովհետև գէրվիշ Բեդինի դերը խաղալով՝ այնպէս յիմարացրի մարդկանց որ նրանք ինձ մի մարգարէ համարեցին»:

Այստեղ, դէրվիշ Սաֆարն իր ձեռքը դնելով իմ մօտ նստած գէրվիշի ուսին՝ ասաց.

«Ահա սա էր իմ ընկերը հէզարէցիների մէջ եղած ժամանակ: Սա կարող է լաւ յիշել թէ ինչ վարպետութեամբ մենք հաւատացնում էինք նրանց, որ իբր թէ՛ մենք ունէինք մի մեծ

կաթսայ որ միշտ լի էր փլաւով: Վերջապէս ես այն մեծահոշակ Հազրէթի Ոշանն եմ, որի մասին դուք վերջերս այնքան պատմութիւններ էք լսել Սորասանում: Մի քանի շաբաթ սրանից առաջ ես մի հրաշք գործեցի մի կոյր աղջկայ վրայ: Ես իմ ընկերներէ հետ միասին կատարելապէս առողջացրի նրա աչքերը, և այժմ մարդիկ խորին ակնածութեամբ և յարգանքով են վերաբերում դէպի մեզ»:

Դէրվիշ Սաֆարը այստեղ վերջացնելով իր պատմութիւնը, առաջարկեց իր մօտ նստած դէրվիշին պատմել իրանը: Այս այն դէրվիշն էր որ հէզարեցիներէ մէջ եղած ժամանակ դէրվիշ Սաֆարի ընկերն էր եղել:

Նա սկսեց իր պատմութիւնն այսպէս.

«Հայրս մի յայտնի օրէնսգէտ էր Ղում քաղաքում: Նա մի շատ բարեպաշտ մարդ էր: Ո՛չ ոք նրա պէս ճշտապահութեամբ չէր կատարում իր կրօնական պարտականութիւնները: Մի խօսքով նա շիաների «սերն» էր համարում: Նա մի քանի որդի ունէր, որոնց բոլորին էլ նա վարժեցրել էր խիստ ճշտապահութեամբ կատարել մեր կրօնի արտաքին պաշտամունքները:

«Ինչքան մեր հայրը աւելի խստութեամբ էր վարւում մեզ հետ, մենք այնքան աւելի խաբեբայութեամբ ու խորամանկութեամբ էինք վերաբերում դէպի իրան: Սաբեբայութիւնն ու խորամանկութիւնը կամաց-կամաց այնքան խոր արմատներ ձգեցին մեր սրտերում, որ ամբողջ քաղաքում մենք ստախօսներ և կեղծաւորներ կոչուելու տարաբախտութիւնն ունեցանք: Մասնաւորապէս ես այնքան լիրբ, ստախօս, խարդախ ու կեղծաւոր համարուեցի, որ ստիպուեցի ինձ պաշտպանելու կամ վարկս վերականգնելու համար դէրվիշ դառնալ: Այո, դէրվիշ դարձայ և ճանապարհուեցի դէպի Թէհրան:

«Ես հէնց նոր Թէհրան էի հասել և բնակարան վարձել մի դեղավաճառի խանութի դիմացի տնում, երբ մի ծեր կին շտապով ինձ մօտ եկաւ և յայտնեց որ իր դեղավաճառ աղան սաստիկ հիւանդացել էր չափից աւելի ուտելու պատճառով, և թէ իր գործածած դեղերն անօգուտ են եղել, և հետեւապէս նրա խանումը իրան ուղարկել է ինձ մօտ խնդրելու ինձանից որ թալիսմանով մի ճար անեմ նրան:

«Որովհետեւ ես թուղթ, գրիչ և թանաք չունէի, ես պատճառ բռնեցի, որ հարկաւոր էր թալիսմանը գրել անդէրունում (կանանց բաժնում), որտեղ պտուկած էր հիւանդը և որտեղ գրելու համար ամեն բան կը լինէր: Պառաւը համաձայնեց, և մի քանի բոպէից յետ ես ինձ գտայ մի սենեակում, որտեղ յատա-

կի վրայ պառկած էր հիւանդը՝ շրջապատուած մի խումբ կանանցից, որոնք աղաղակում էին՝ «վայ վայ... նա մեռնում է»։ Բժշկական մի քանի գործիքներ, որ ընկած էին յատակի վրայ, ցոյց էին տալիս, որ ոչ մի բան չէր խնայուել նրան առողջացնելու կամ սպանելու համար։ Մի մեծ կոնք, որի մէջ կար հիւանդին խմացրած դեղի մի մասը, դրուած էր դռնակի վրայ։ Մի երկար ապակեայ խողովակ—այդ չարչարանաց գործիքը, դրուած էր մի անկիւնում։ Գործիքների մէջտեղում նստած էր մի բժիշկ որ անտարբերութեամբ ծխում էր դայանը։ Երևի նա մարդկային ամեն ջանք գործ դնելուց և նրանց ապարդիւն գտնելուց յետոյ զիջել էր գերբնականի կամ գերմարդկային ձեռքի օգնութեանը դիմել իբրև վերջին միջոց իր հիւանդին բժշկելու։ Հետևապէս նա էր առաջարկել թալիսմանը, որ ինձ էր վիճակուել գրելու։

«Նոր դէրվիշի—իմ ներկայութիւնը նոր յոյսեր ներշնչեց նրանց սրտերի մէջ, որովհետև երբ ես մտայ հիւանդի սենեակը, մեծ ոգևորութիւն ընկաւ հիւանդին շրջապատողների մէջ։ Ես հրամայաբար թուղթ ուզեցի և այնքան ինքնավստահութիւն ցոյց տուի, որ բոլորն էլ հաւատացին որ ես անպատճառ պիտի առողջացնէի հիւանդին իմ թալիսմանով, թէպէտ մինչև այդ ժամանակ ես դեռ ոչ մէկը չէի գրել իմ կեանքում։ Ինչևէ, իսկոյն մի կտոր թուղթ, մի գրիչ և թանաք տրուեց ինձ, և ես ամենայն լրջութեամբ զանազան խզմզանքներ անելով թղթի վրայ, երբեմն էլ Ալլահ, Մոհամէդ, Ալի, Հասան և Հոսէյն անուններն արտասանելով ու գետեղելով նրանց մէջ, երբեմն էլ տառերի փոխարէն թւանշաններ գրելով՝ վերջացրի թալիսմանը և մեծ հանդիսաւորութեամբ յանձնեցի բժշկին, որը լուսնալով նրան (թալիսմանը) մի կոնք ջրի մէջ (մինչդեռ կանայքն էլ անդադար աղօթում էին այդ թանգագին գրութեան ներգործութեան համար)՝ սասց։

—«Յանուն մեծ Մարգարէի, թող հիւանդը խմէ այս ջուրը, և եթէ նրա ճակատագիրն է դեռ ապրել, այն սուրբ անունները որ այժմ նա պիտի կուլ տայ, իսկոյն կը բժշկեն իրան։ Իսկ եթէ նրա ճակատագիրն է մեռնել, ոչ իմ, ոչ էլ ուրիշի խելքը, հանճարն ու հմտութիւնը կարող են որևէ օգուտ ընծայել նրան։

«Ձուրը խմացրին հիւանդին, բոլորն անհամբեր սպասում էին փոփոխութիւն կամ առողջանալու նշաններ տեսնել նրա վրայ։ Մի քիչ ժամանակ նա մնաց անշարժ, բայց քիչ յետոյ ի զարմանս բոլորի՝ (անշուշտ ինձ և բժշկի համար ոչ մի զարմանալու բան չկար) հիւանդը մի բարձր հառաչանք ար-

ձակեց, բացաւ իր աչքերը, բարձրացրեց գլուխը և ուզեց մի կոնք: Կոնքն իսկոյն դէձ բռնուեց նրա բերանին, և նա ամբողջ խմած դեղը փսխեց նրա մէջ:

«Նա առողջացաւ:

«Ըստ իս, նրա առողջանալը վերագրելի էր Թանաքի և Թղթի (Թուղթը դեղի թուղթ էր) գարշահամութեանը, որ պատճառ էր դարձել նրան փսխելու. սակայն ես աշխատեցի հաւատացնել նրանց որ իբր թէ հիւանդի առողջանալը վերագրելի էր միմիայն իմ թալիսմանի զօրութեանը: Միւս կողմից էլ բժիշկն իրան էր վերագրում, որովհետև հէնց որ հիւանդը իր աչքերը բացաւ, նա ասաց.

— «Ես չասացի որ այդպէս կը լինի, տեսէք, տեսէք իմ տուած դեղերի օգուտը: Եթէ ես չլինէի, ձեր հիւանդը արդէն մեռած կը լինէր:

«Ի՞նձ անտանելի էին այս խօսքերը. ուստի չթողնելով նրան շարունակել՝ ես ասացի.

— «Եթէ դու բժիշկ ես, ապա ինչո՞ւ չկարողացար բժշկել հիւանդիդ առանց ինձ այստեղ հրաւիրելու: Դու շատ լաւ կ'անես՝ զբաղուես վէրքեր լաւացնելով և մարդկանցից արիւն առնելով: Քո բանը չէ խառնուել այնպիսի գործերում, որ քեզ չեն վերաբերում:

— «Ո՞վ մեծ դէրվիշ, պատասխանեց նա, ես կասկած չունիմ որ դու շատ հմուտ ես թալիսման գրելու մէջ, և կարող ես մեծ գին առնել դրա համար. բայց ամեն մարդ իմանում է թէ ո՞վքեր և ինչեր են դէրվիշները, և եթէ երբևիցէ իրանց թալիսմաններն օգտակար են լինում՝ այդ նրանց սրբութիւնիցը չէ:

— «Իսկ ո՞ւմ շունն ես դու, որ համարձակուամ ես այդ ձեռով խօսել ինձ հետ, այո՛, ինձ հետ, որ մեծ Մարգարէի ծառան եմ: Դուք բժիշկներդ արդէն լաւ յայտնի էք ձեր տգիտութեամբ ու խարերայութեամբ. եթէ պատահամք ձեր հիւանդն առողջանում է, դուք նրա առողջութիւնը վերագրում էք ձեր հմտութեանը, իսկ եթէ մեռնում է, դուք ասում էք. «Աստուծոյ անօրինութիւնն էր... մարդկային ջանքն ի՞նչ է Աստուծոյ կամքի առաջ»: Գնան, գնան, ասացի ես, և երբ որ քո հիւանդին դարձեալ գերեզմանի դուռը կը հասցնես և կը մնաս շուարած թէ ինչ անես, ուղարկիր իմ ետևից և ես իսկոյն կը գամ ու կը ծածկեմ քո յամառ տգիտութիւնը՝ առողջացնելով նրան, ինչպէս արի այս դեղավաճառին:

— «Երբու՞րեմ եմ գլխովս, երբու՞րեմ եմ իմ մահովս, պատասխանեց բժիշկը, որ ես այն մարդը չեմ որ հանդուրժեմ լսել

այդպիսի խօսքեր որևէ մէկից, մանաւանդ քեզ պէս մի շունչ գէրվիշից:

«Եւ իսկոյն նա վեր ելաւ և սպառնական դէմքով մօտեցաւ ինձ հազար ու մի յիշոցններ տալով:

«Ես պակաս չմնացի նրանից և շուտով բոռնցքի եկանք. նա փետեց իմ մազերը և ես՝ նրա մօրուքը: Մենք կծեցինք միմիանց, թքեցինք միմիանց երեսին և առանց փոյթ տանելու հիւանդի համար՝ այնքան կատաղութեամբ կուռեցինք, որ կանայքն սկսեցին մեծ աղմուկ բարձրացնել տան մէջ, և իմ գիտէր ինչպէս պիտի վերջանար մեր կռիւը, եթէ կանանցից մէկը մէջտեղ չընկնէր և չհաւատացնէր մեզ որ ուստիկանապետի մարդիկը լսելով աղմուկը՝ եկել էին տան դուռը և ուզում էին իմանալ թէ ինչ է նշանակում այդ խռովութիւնը տան մէջ:

«Այս կնոջ միջամտութիւնը բաժանեց մեզ, և յետոյ ես ուրախացայ, երբ նկատեցի որ մեր կուռի հանդիսատեսները բոլորն էլ իմ կողմն էին և հակառակ էին բժշկին, որը, ինչպէս նրանք ասում էին՝ մենակ փող առնել գիտէր և ուրիշ ոչինչ: Բայց ինձ վրայ նրանք նայում էին որպէս մի սուրբ մարդու որ զօրութիւն ունի բժշկելու ամեն տեսակ հիւանդութիւն:

«Բժիշկը տեսնելով որ իր բանը վատ է գնում, կամաց դուրս ծլկուեց սենեակից. բայց առաջ քան սենեակից դուրս գնալը նա կռացաւ և հաւաքելով իր մօրուքի մազերը որ ես դուրս էի տուել, դէմ բռնեց ինձ և սպառնական տոնով ասաց.

— «Մենք վաղը կը տեսնենք թէ մեր գործն ինչպէս կը վերջանայ դատաւորի առջև: Մօրուքիս իւրաքանչիւր մազը մէկ դուկատ կ'արժէ թէհրանում. հիմա տեսնենք դու կարող ես այդ քո բոլոր թալիսմաններով վճարել սրանց գինը:

«Այս սպառնալիքն իսկի էլ չվախեցրեց ինձ, որովհետեւ ես գիտէի որ երբ նրա բարկութիւնն իջնէր, նա իր վարկը չձգելու համար ոչ մի քայլ չէր աշխիլ ինձ դատապարտելու, ուստի ես ոչինչ չպատասխանեցի նրան, բոլորովին հանգիստ մնացի:

«Շուտով լուր տարածուեց ամբողջ Թէհրանում, որ մի նորեկ դէրվիշ կարողացել է բժշկել այս ինչ դեղավաճառին իր մահամերձ հիւանդութիւնից, և ես ընդհանուր զմայլման ու զարմացման առարկայ դարձայ:

«Առաւօտից մինչև երեկոյ ես զբաղում էի թալիսմաններ գրելով և այնպէս լաւ գնեցով էի ծախում նրանց, որ շուտով մի քանի հարիւր թուման փողի տէր դարձայ: Բայց տարաբախտապէս դեղավաճառի պէս հիւանդներ շատ քիչ էին ճար-

ւում, և թէև նրա դէպքը կարող էր երկար ժամանակ պահպանել իմ հոչակը, այնուամենայնիւ կասկածելով որ մի գուցէ իմ իսկական գոյնն էլ դուրս տրուի, խոհեմութիւն համարեցի հեռանալ թէհրանից: Որտեղ որ ես վճռում էի գնալ, ես այնպիսի հնարքներ էի գործ դնում որ իմ հասնելուց առաջ իմ մեծ համբաւն էր տարածուում այնտեղ:

«Դեղավաճառն ինձ մի վկայագիր էր տուել, որով նա վաւերացնում էր իմ մասին տարածուած մեծ համբաւը: Մինչև այս րոպէն էլ ես դեռ ևս վայելում եմ այդ համբաւը և հէնց որ նկատեմ որ հանգամանքներն սկսում են աննպաստ գնալ դէպի ինձ, ես իսկոյն կը հեռանամ այստեղից և կ'երթամ մի ուրիշ տեղ»:

Այստեղ դէրվիշը վերջացրեց իր պատմութիւնը: Յետոյ երրորդը սկսեց իրենն այսպէս.

«Թէպէտ պատմութիւններ անելն իմ գործն է, բայց իմս կարճ կը բռնեմ: Ես մի ուսուցչի որդի եմ: Հայրս սովորեցրեց ինձ կարդալ և կրկնել այն պատմութիւններից շատերը, որոնցից շատ կան մեր մէջ. և երբ նա տեսաւ որ ես բաւական պաշար ունէի, նա ինձ դէրվիշի զգեստ հագցրեց և դուրս ուղարկեց ինձ կեանքի ասպարէզը՝ հրապարակներում պատմելու այն, ինչ որ ես սովորել էի:

«Առաջին փորձերս շատ անյաջող գնացին, որովհետև ունկնդիրները պատմութիւնս լսելուց յետոյ թողնում, հեռանում էին առանց վարձատրելու ինձ. սակայն կամաց-կամաց փորձերը սովորեցրին ինձ գործս արդիւնաւոր կերպով առաջ տանելու եղանակը: Ասեմ թէ ինչպէս: Երբ սկսում էի մի պատմութիւն և հասնում էի նրա այն մասին որը շատ հետաքրքրում էր ունկնդիրներին, այնպէս որ նրանք անհամբեր սպասում էին լսելու շարունակութիւնը, ես կանգ էի առնում և ասում.

Ո՛վ դուք, բոլորդ որ հաւաքուել էք այստեղ, եթէ դուք մի նուէր կը տաք ինձ, եթէ դուք մի շնորհ կ'անէք ինձ ձեր առատաձեռնութեամբ, ես ձեզ կը պատմեմ, թէ վերջն ինչպէս եղաւ:

«Այս հնարքով ինձ յաջողում էր գոնէ մի բուռ սև փող ձեռք բերել: Օրինակի համար, «Պաթայի իշխանի և Սամար-դանդի իշխանուհու» պատմութեան մէջ, երբ մարդակեր «Հէղարմանը» բռնում է իշխանին և ուզում է կուլ տալ նրան, և երբ իշխանուհին ճիւղի առջև չոքած՝ աղէկտուր ձայնով խնդրում է նրանից ազատ թողնել իշխանին, երբ որտաը թընդացնում է երկինք ու երկիր, և ճիւղին էլ ոռնում է, ես

կանգ եմ առնում և ասում. «այժմ, սվ ազնիւ մարդիկ, բաց արէք ձեր քսակները բերանը, և դուք շուտով կը տեսնէք թէ ճաթայի իշխանն ինչ հրաշքով կարողացաւ կտրել ճիւղադի գըլուխը»:

«է՛հ, այսպիսի հրաշքներով ինձ յաջողում է հայթհայթել ապրուստս, և երբ մի տեղ իմ պատմութիւնների պաշարը սպառւում է, իսկոյն հեռանում եմ այնտեղից դէպի մի ուրիշ տեղ և շարունակում գործս»:

ԳԼ. ԺԶ.

Հաջի Բարան նկատում է որ մինչև անգամ այս աշխարհում խաբէութիւնն անպատիժ չէ մնում: — Նա նոր ծրագիրներ է պատրաստում:

Երբ դէրվիշները վերջացրին իրանց պատմութիւնները, ես յայտնեցի նրանց իմ շնորհակալութիւնը ինձ ցոյց տուած հիւրասիրութեան համար և վճռեցի սովորել նրանցից այն ամէն բաները, որ մի դէրվիշի հարկաւոր է, որովհետև այդ բաները ժամանակով պէտք կը գային ինձ, այո՛, նրանք շատ պէտք կը գային ինձ, երբ ես էլ դէրվիշ կը դառնայի:

Դէրվիշ Սաֆարը ինձ սովորեցրեց շատ օյիններ, որոնցով ինձ կը յաջողուէր ապագայում մարդկանց աչքերը կուրացնել... Ես սովորեցի թալիսման գրելու արհեստը երկրորդ դէրվիշից, իսկ երրորդը սովորեցրեց ինձ իր իմացած պատմութիւններից մի քանիսը, փոխ տուեց իր գրքերը և սովորեցրեց ընդհանուր կանոններ իմ ունկնդիրների ուշադրութիւնը գրաւելու, պատմութիւնս խիստ հետաքրքիր դարձնելու և մարդկանց գրպանները դատարկելու: Բայց ես դեռ շարունակեցի իմ ծխախոտավաճառութիւնը, և որովհետև իմ բարեկամ դէրվիշները շատ առատօրէն էին գործածում իմ ծխախոտը, ուստի ես ստիպուեցի աւելի մեծ քանակութեամբ էշի կամ ձիու չորացած աղբ խառնել նրա հետ որպէսզի շատ չվնասուեմ: Խեղճ մուշտարիներ, նրանք բացի աղբից, յարդից և չորացած տերևներից ուրիշ բան չէին ծխում:

Մի երեկոյ բազարները փակուելու ժամանակ մի կին, որ պառաւութիւնից երկուտակուել էր և ծածկուած էր ցնցոտիներով, առաջ կտրեց և խնդրեց ինձանից մի չիբուխ տալ իրան ծխելու: Նրա երեսը ծածկուած էր քօղով, և բացի իր խնդրածից՝ ուրիշ մի բան չխօսեց ինձ հետ:

Ես լցրի չիբուխներս մէկը ամենավատ խառնուրդովը, որ ես ունէի, և տուի նրան: Հէնց որ նա առաջին «փոփ» ծու-

իր կուլ տուեց, սկսեց սաստիկ հազար, թքել և խեղդուողի ձայ-
ներ հանել, որի վրայ մի քանի վիթխարի մարդիկ ճիպոտները
ձեռքներում իսկոյն յարձակուեցին վրաս, բռնեցին ինձ և
պառկեցրին գետնի վրայ:

Կարծեցեալ պառոււր յետոյ բարձրացրեց իր քօղը, և ի՞նչ
ասել կուզի որ նա հէնց ինքը մոնիթասիքն *) էր:

—Այ թշուառական, խարդախ սպահանցի, ասաց նա,—վերջ
ի վերջոյ դու իմ ճանկն ընկար, դո՛ւ, այո՛ դու որ այսքան եր-
կար ժամանակ քո խարէութեամբ և քո պիղծ խառնուրդնե-
րով թունաւորել ես Մէշհէդի ժողովրդին: Իմացիբ որ այս քա-
ղաքում քո վաստակած շահիներէ թւով դու հարուածներ պի-
տի ստանաս քո ոտներին: Բերէ՞ք, բերէ՞ք Փալախկան, գոռաց
նա դէպի իր ծառաները.—կապեցէք սրան և հարուածեցէ՞ք
այնքան, մինչև որ եղունգները թափուին:

Ոտներս անմիջապէս կապուեցին Փալախկային, և ճիպոտ-
ների հարուածներն այնքան խիստ կերպով տեղացին ոտներիս
տակին որ մէկի փոխարէն՝ տասն հազար մոնիթասիքներ աչ-
քիս առաջ երևացին, նաև տասն հազար քաւթառներ որ կար-
ծես թէ պարում էին շուրջս և դիւական քրքիջներով ուրա-
խանում էին կրածս տանջանքի վրայ:

—Ողորմեցէ՞ք ինձ, ի սէր ձեր հօր, ի սէր ձեր մօր, ձեր
պապերի, ձեր հոգու, խնայեցէ՞ք ինձ, ի սէր ձեր զաւակների...
Ի սէր Մոհամէդի, Ալլիի և բոլոր իմամների, այդպէս մի տան-
ջէք ինձ... ես անիծում եմ ծխախոտը, հրաժարուում եմ ծխե-
լուց, հազար անէծք դայ զլիսիս, եթէ միանգամ էլ ծխախոտ
ծախեմ. ազատ թողէ՞ք ինձ:

Ես դիմեցի ինձ շրջապատող թամնաշաշիներին (հանդի-
սատեսներ) ծգնելու ինձ, բայց իզո՛ւր: Դիմեցի նաև իմ մտե-
րիմ դէրվիշներին, որոնք կանգնած էին այնտեղ, սակայն նը-
րանք իրանց տեղիցն էլ չշարժուեցին: Վերջապէս ես այնքան
լացի, գոռացի, աղաչեցի, պաղատեցի՝ մինչև որ ուշաթա-
փուեցի:

Երբ ուշքի եկայ, ես ինձ գտայ փողոցում մի պատի տակ
ընկած, շրջապատուած ամբոխից, որոնք բերան-բաց նայում
էին ինձ, թէև նրանցից ոչ մէկն էլ չխղճաց ինձ:

Իմ չիբուխները, ջրամանը, կրակամանը և վերջապէս ա-
մեն բան, ինչոր ունէի, յափշտակել էին ինձանից, և այժմ ինձ
մնում էր ջախջախուած խիտունջի պէս փորսող տալով տուն

*) Մոնիթասիքը մի պաշտօնեայ է որ ծպտեալ ման է զալիս քաղաքում
և քննում է կշեռներն ու չափերը, նաև ուսուիրքների տեսակները:

գնալ Բնակարանս բարեբախտաբար շատ հեռու չէր, թէև մինչև այստեղ հասնելու հոգիս դուրս եկաւ: Ոտներս ուշելով՝ փղի ոտների էին նմանում. ամբողջ մարմինս ծածկուած էր արիւնով, և ես կրում էի ամենադառն տանջանքը:

Միւս օրն իմ դէրվիշ ընկերներից մէկն այցելեց ինձ, և վախովսելով, զգուշացրեց ինձ ոչ ոքի չ'ասել որ ինքն ինձ այցելութեան էր եկել, որպէսզի մարդիկ չկարծէին թէ ինքն էլ գործակից է եղել ինձ իմ խարդախութիւնների մէջ:

Իր կեանքում նա էլ էր իմ վիճակին հանդիպել և փորձով գիտէր թէ իմ ոտները լաւացնելու համար ինչ դեղ էր պէտք: Նա իր գրպանից հանեց մի ինչ որ օժանելիք և քսեց իմ ոտներին, որ շուտով առողջացան:

Ես վճռեցի հեռանալ Մէշհէդից, ուստի վերցնելով իմ ունեցած-չունեցած փողը որ իմ սենեակի մի անկիւնում թաղել էի, պատրաստուեցի ճանապարհուել դէպի Թէհրան:

Իմ դէրվիշ ընկերները խորհուրդ տուին ինձ շուտով հեռանալ, և Դէրվիշ Սաֆարն էլ կամք յայտնեց ուղեկցելու ինձ:

— Ես լուր եմ ստացել, ասաց նա, որ Մէշհէդի բոլոր կրօնաւորները նախանձելով իմ մեծ փառքին, պատւին և անուանը՝ դաւադրութիւն են անում ինձ ոտնակոխ անելու, ոչնչացրնելու, և քանի որ ես նրանց հաւաքական ուժի դէմ չեմ կարող կանգնել, աւելի լաւ է որ ես էլ հեռանամ այստեղից և քախտս որոնեմ մի այլ տեղ:

Ինձ խորհուրդ տուին դէրվիշի շորեր հագնել. ուստի գընացի բազար և գնելով մի գլխարկ, մի թէսբի և մի այծի մորթի՝ հագնուեցի որպէս մի դէրվիշ և պատրաստուեցի ճանապարհուել Սաֆարի հետ:

Մենք այնքան անհամբեր էինք շուտով մեկնելու, որ վճռեցինք ճանապարհ ընկնել առանց ուրիշ ընկերներ գտնելու. սակայն առաջ քան մի վերջնական քալ անելը մտածեցինք մի ֆալ *) բանալ Սաադիի գրքից:

Դէրվիշ Սաֆարը մի համառօտ աղօթքից յետոյ բացաւ գիրքը և կարդաց հետևեալը.

«Բանականութեան և իմաստունների խրատներին հակառակ բան է՝ դեղ գործածել առանց վստահութեան, կամ ճանապարհորդել մի անծանօթ ճանապարհով առանց ընկերակցելու մի կարաւանի»:

*) Սաադի, Հաֆէզ և զորանը երեք զբեր են, որոնց միշտ դիմում են պարսիկները իրանց անելիք գործերի համար զուշախութիւններ անելու. «ֆալ» բանալ նշանակում է այս երեք զբերից որևէ մէկին դիմել:

Այս արտաքոյ կարգի ազդարարութիւնը որոշեց մեր անե-
լիքը, և մենք վճռեցինք ղեկավարուել դրանով:

Մինչդեռ ես այս ու այն կողմերն էի գնում և հե-
տաքրքրուում իմանալու թէ Թէհրան գնացող կարաւանը երբ
պիտի ճանապարհուէր, հանդիպեցի իմ բարեկամ Ալի Ղաթէրին,
որ հէնց նոր Մէշհէդ էր հասել և խօսում էր մի վաճառականի
հետ նրա ապրանքը Թէհրան փոխադրելու համար: Հէնց որ նա
տեսաւ ինձ, անչափ ուրախացաւ և իսկոյն պատրաստելով իր
նարգիլէն՝ հրաւիրեց ինձ ծխելու: Ես պատմեցի նրան բոլոր
իմ արկածների մասին, և նա պատմեց ինձ իրանը:

Ալի Ղաթէրը համաձայնեց որ դէրվիշ Սաֆարը և ես իր
հետ Թէհրան գնանք, խոստանալով մեր յոգնած ժամանակ
թոյլ տալ մեզ հեծնել իր ջորիները:

ԳԼ. ԺԳ.

Հացի Բարան հեռանում է Մէշհէդից:—Նրա մէջքն առողջանում է:—
Մի պատմութիւն է անում:

Մէշհէդից դուրս տանող մեծ դուռը հասնելով ես անի-
ծեցի այդ քաղաքը, որտեղ այնքան տանջանքներ էի կրել:
Դէրվիշ Սաֆարն էլ անիծեց Մէշհէդի ժողովրդին նրա համար
որ կրօնաւորներից հալածուել էր:

Մէջման հասնելուց մի օր առաջ, երբ ես օգնում էի Ալի
Ղաթէրին իր ջորիները բառնալու ժամանակ, մէջքս այնպէս
սաստիկ կերպով վնասուեց, որ տեղիցս շարժուել չկարողա-
ցայ: Զորեպանն ու դէրվիշ Սաֆարը տեսնելով որ բոլորովին
անհնար էր ինձ համար շարունակել իմ ճանապարհորդութիւ-
նը, թողեցին ինձ և գնացին:

Մէջքս առողջանալու համար սրան-նրան դիմելուց յետոյ՝
ինձ մօտ եկան մի սափրիչ և մի անասնաբոյժ, որոնք յանձն
առան առողջացնել ինձ: Նրանք բերին մի ամանով կրակ, մի
փուքս և մի քանի շամփուրներ, որոնց կրակի մէջ դնելով շի-
կացրին և ինձ երեսի վրայ պառկեցնելով՝ նրանց դրին մէջքիս
վրայ: Զայնս երկինքն հասաւ ցաւից ու այրուելուց, մեռնում
էի, սակայն նրանք սիրտ էին տալիս ինձ ասելով.

—Յանուն Ալլահի շուտով կ'առողջանաս, Ալլահը կ'առող-
ջացնի քեզ:

Եւ ի՞նչ ասել կ'ուզի որ մի քանի օր անշարժ պառկելուց
յետոյ մէջքս լաւացաւ, թէև շիկացած շամփուրների պատճա-

ուած վերքերը սպանելու չափ տանջեցին ինձ, մինչև որ մի քանի տեսակ սպեղանիների զործածութեամբ բուժուեցին:

Այժմ ես մտածեցի շարունակել իմ ճանապարհորդութիւնը, բայց փորձելու համար թէ՛ իբր դէրվիշ ես ինչքան ընդունակութիւն ունիմ՝ պատրաստուեցի մի պատմութիւն անել Մէմնանի ժողովրդի համար: Մի առաւօտ ժողովրդին հաւաքելով շուրջա՝ սկսեցի հետեւեալ պատմութիւնը.

«Հարուն-էլ-Ռէշիդի թագաւորութեան ժամանակ Բաղդատում ապրում էր մի անուանի սափրիչ Ալի Սաղկալ անունով: Բաղդատում մարդ չկար, որ նրա մուշտարին չլինէր, և նրա գործն այնքան յաջող էր գնում, որ նա կամաց-կամաց սկսեց հպարտանալ ու գոռոզանալ, այնպէս որ բացի բէգերից՝ ուրիշ ոչ ոքի չէր ցանկանում սափրել: Փայտահատները միշտ իրանց բեռները բերում էին ծախելու այս սափրիչին, որ լաւ գնով էր առնում, որովհետև Բաղդատում փայտը շատ սակաւ և թանգ էր, և ինքն էլ ամենից աւելի կարիք ունէր փայտի: Պատահեցաւ որ մի օր մի խեղճ փայտահատ, որ ամենևին ծանօթ չէր Ալի Սաղկալի բնաւորութեան հետ, իր էջի վրայ բարձած մի բեռ փայտ բերեց նրան ծախելու: Ալի Սաղկալը մի գին նշանակեց հետեւեալ խօսքերով.

— «Այս գինը տալիս եմ էջի վրայի բոլոր փայտի համար»: «Փայտահատը համաձայնեց, բեռը վայր ձգեց և պահանջեց խոստացուած գինը:

— «Ռեռ բոլոր փայտը վայր չես ձգել, ասաց սափրիչը. դու պէտք է տաս ինձ նաև համետը (համետը շինուած է լինում փայտից), որովհետև մենք այդպէս պայմանաւորուեցինք:

— «Այդ ի՞նչ ես ասում, ասաց փայտահատը շուարած: Ե՞րբ է տեսնուել այդպիսի առևտուր: Ո՛չ, այդ անկարելի բան է:

«Շատ խօսքերի փոխանակութիւններից յետոյ սափրիչը բռնի կերպով վերցրեց համետը էջի վրայից և հեռացրեց խեղճ գիւղացի փայտահատին:

«Անճարացած՝ գիւղացին գնաց դատաւորի մօտ և զանգատուեց սափրիչի դէմ. սակայն դժբախտաբար այդ դատաւորը Ալի Սաղկալի մուշտարիներից մէկը լինելով չուզեց լրսել նրա զանգատը: Նա դիմեց մի բարձրագոյն դատարանի, սակայն այնտեղի դատաւորն էլ պաշտպանեց սափրիչին: Գիւղացին շուտահատուեց: Նա իսկոյն գնաց զրազրի մօտ և գրել տուեց մի խնդրագիր խալիֆին ներկայացնելու համար: Խնդրագիրը մատուցուեց, և փայտահատը կանչուեց խալիֆի մօտ: Երբ նա ներկայացաւ, չոքեց և համբուրեց գետինը. յետոյ կանգնեց, ոտները զոյգ, ձեռները մեկնած դէպի խալիֆը, ամ-

բողջ մարմինը ծածկուած իր վերարկուի տակ, և անհամբեր պատեց նրանից վճիռ ստանալու:

— «Բարեկամ, ասաց խալիֆը, պայմանները պէտք է անպատճառ պահուին: Դու համաձայնել ես սափրիչին տալ էշիդ վրայի ամբողջ փայտը, և նա յանցաւոր չէ, եթէ վերցրել է համետը, բայց...»

Մալիֆը խօսքը ընդհատեց և գիւղացուն իր մօտ կանչելով՝ մի ինչոր բան փսփսաց նրա ականջին և հեռացրեց նրան: Այստեղ ես կանգ առայ և մի թիթեղեայ գաւաթ դէմ բռնելով իմ ունկնդիրներին՝ ասացի.

— Արդ, ո՞վ աղչիւ մարդիկ, եթէ դուք մի բան կը շնորհէք ինձ, ես կ'ասեմ թէ խալիֆն ինչ ասաց փայտահատին:

Ես այնքան հետաքրքրութիւն էի շարժել, որ բոլորն էլ ինձ փող տուին և անհամբեր էին լսելու պատմութեան մնացած մասը:

«Է՛ւա, ասացի ես, գիտէ՞ք ինչ ասաց խալիֆը փայտահատի ականջին: Նա յայտնեց նրան, թէ ինչ միջոցով կարելի կը լինէր պատժել սափրիչին և բաւարարացնել իրան:

«Մի քանի օրից յետոյ, գիւղացին գնալով Ալի Սաղկալի խանութը, իր էշի երասանից բռնած՝ խնդրեց նրանից սափրել իրան և իր ընկերին: Սափրիչը որոշեց մի վճար, գիւղացին համաձայնեց: Նա սկսեց սափրել նրան և երբ վերջացրեց, ասաց գիւղացուն.

— «Շուտ արան, թւր է ընկերդ, դէ, ասան՝ շուտ ներս գայ:

— «Ը՛նկերս դուրսն է, ասաց գիւղացին, այս ըոպէիս ես ներս կը բերեմ նրան:

«Նա դուրս գնաց և իր էշի երասանից բռնած՝ ներս մըտաւ՝ ասելով՝

— «Ահա իմ ընկերը. դու պիտի սափրես սրան էլ:

— «Սափրեմ դրան էլ, գոռաց սափրիչը.— բաւական չէ՞ որ ես զիջել եմ քեզ պէս մի մարդու սափրել, դու համարձակուում ես խնդրել ինձանից սափրել և՛ քո էշի՞ն: Կորի՛ր, կորի՛ր, եթէ ո՛չ, երկուսիդ էլ ջհաննամը կ'ուղարկեմ:

«Եւ նա դուրս հրեց երկուսին էլ:

«Սեղծ փայտահատը անմիջապէս գնաց խալիֆի մօտ և պատմեց եղելութիւնը:

— «Շատ լաւ, ասաց հաւատացեալների պետը: Այս ըոպէիս ինձ մօտ բերէ՛ք Ալի Սաղկալին իր ածելիներով հանդերձ, հըրամայեց նա իր ծառաներին:

«Տասը ըոպէից յետ սափրիչը ներկայացաւ:

— «Ի՛նչո՞ւ դու չես սափրում այս մարդու ընկերին, հար-

ցրրեց խալիֆը.—չէ որ դու համաձայնել ես նրան էլ սափրել:
«Այի Սաղկալը համբուրելով գետինը՝ ասաց.

—Մի՛ վ խալիֆ, ճշմարիտ է որ ես համաձայնել եմ, սա-
կայն հիվ էր կարող երևակայել, թէ սրա ընկերը մի էշ է:

—«Դու լաւ ես ասում, ասաց խալիֆը. բայց ես էլ պիտի
քեզանից հարցնեմ, թէ Քրք է լսուել կամ տեսնուել որ փայտ
գնողը իրաւունք ունի էշի համեման էլ վերցնել որպէս գնած
փայտի մի մասը: Ո՛չ, ո՛չ, աղան սափրիչ, այժմ այս խեղճ գիւ-
ղացու հերթն է, և ես հրամայում եմ քեզ անմիջապէս սափրել
էշին, եթէ ո՛չ, դու գիտես ինչ կը գայ գլխիդ:

«Սափրիչը պարտաւորուեց պատրաստել մի մեծ ամանով
օճառի փրփուր, որով նա տրորեց էշի ամբողջ մարմինը և
սկսեց սափրել նրան խալիֆի և ամբողջ դատարանի առջև՝ յա-
րուցանելով բոլորի ծիծաղը:

«Փայտահատը հեռացաւ մի լաւ ընծայ ստանալով, և ամ-
բողջ Բաղդատում տարածուեց հաւատացեալների պետի արդա-
րադատութեան լուրը»:

ԳԼ. ԺԴ.

Հաջի Բարան հանդիպում է մի մարդու.—Ինչ հետեւանք է ունենում այդ
հանդիպումը:

Ուրախ սրտով հեռացայ Մէմնանից: Մէջքս առողջացել էր.
ես դեռ ջահիլ էի, 20 թուման փող ունէի և աշխարհից շատ
փորձեր: Մտածեցի Թէհրան հասնելուս պէս մի կողմ դնել
դէրվիշական շորերս և փոխուել ոտից մինչև գլուխ մի նոր
կեանք սկսելու համար:

Մէկ օրուայ ճանապարհ էլ մնում էր մինչև որ Թէհրան
հասնէի, երբ, մինչդեռ ճանապարհին Լէյլա և Մաջնունի երգը
երգելիս առաջ էի դնում, ետևիցս հասաւ մի ղասիդ (սուրհան-
դակ) որը ըրպէսպէս բարեկամանալով ինձ հետ, հրաւիրեց
ինձ ճաշել միասին ճանապարհի վրայ: Օդը շատ տաք լինելով,
ինքս էլ խիստ քաղցած՝ ուրախութեամբ ընդունեցի նրա հը-
րաւէրը:

Ղասիդը իր ձիու սանձը գլխից հանելով, թոյլ տուեց
նրան արածել ճանապարհի կողքին ընկած արտի նորաբոյս
ցորենի վրայ, և մենք նստեցինք մի առուակի մօտ ճաշելու և
հանգստանալու: Յետոյ նա իր վարտիքի ծալքերի միջից հա-
նելով մի թաշկինակ, որի մէջ կար մի քիչ սառած փլաւ, երեք-
չորս հատ կլոր հաց և մի-երկու հատ էլ սոխ, դրեց մէջ տեղ,
և աւելացնելով նրանց վրայ մի քիչ թթու մածուն որ նա

պահել էր մի քսակի մէջ՝ կախուած իր ձիու թամբից, մենք սկսեցինք ուտել Երկուսս էլ այնքան ախորժակով կերանք որ մի-երկու րոպէում վերջացրինք ամեն բան և սկսեցինք լիզել մեր մատները: Յետոյ լուացինք մեր ձեռքերը և նո՛ր ժամանակ ունեցանք միմիանց հարցուփորձ անել մեր ճանապարհորդութեան նպատակի մասին: Իմ զգեստից նա իմացաւ որ ես դէրվիշ էի, և ես շուտով պատմեցի նրան իմ պատմութիւնը: Իսկ նա որ Աստառաբաղի քաղաքապետի ծառայութեան մէջ գտնուող մի սուրհանդակ էր, գնում էր Թէհրան՝ իմ նախկին ընկեր՝ Շահի բանաստեղծի գերութիւնից ազատուելու աւետիսը հաղորդելու նրա գերդաստանին:

Ես չթողի որ սուրհանդակը հասկանար թէ իր պատգամաւորութիւնը շատ հետաքրքրելի էր ինձ, որովհետև փորձն արդէն սովորեցրել էր ինձ, որ կեանքի մէջ մարդ իր գաղտնիքը չպէտք է յայտնի ուրիշին: Նա յայտնեց ինձ որ Շահի բանաստեղծին յաշողուել էր անվտանգ Աստառաբաղ համեւ, և որ ինքը ուղարկուած էր լուր հաղորդելու նրա ընտանիքին: Նա ցոյց տուեց ինձ մի քանի նամակներ որ մի թաշկինակի մէջ փաթաթուած՝ պահում էր իր ծոցում: Ինքն անզրպէտ լինելով և միևնոյն ժամանակ չափազանց հետաքրքրութիւն ունենալով իմանալու թէ ինչ էր գրուած նամակների մէջ, խընդրեց ինձանից կարդալ նրանց: Նրանցից մէկն ուղղած էր արքայից արքային, երկրորդը՝ մեծ վէզիրին, երրորդը՝ արքունի գանձապետին, չորրորդը՝ բանաստեղծի կնոջը, հինգերորդը՝ իր որդու ուսուցչին և վեցերորդը՝ իր նազիրին:

Ես կրկին փակեցի նամակները և որոնք որ կնքուած *) էին՝ նորից կնքեցի և տուի սուրհանդակին: Նա յոյս ունէր մեծ պարգև ստանալու նրանցից՝ որոնց հասցէին ուղղուած էին նամակները, և ասաց որ գիշեր ու ցերեկ ինքը անդադար ճանապարհորդել էր, որպէսզի ո՛չ մի ուրիշ պատգամաւոր իրանից առաջ չըկնէր: Նա աւելացրեց որ իր հեծած ձին իր սեփականը չէր, այլ նա պատկանում էր մի գիւղացու, որի ձեռքից նա ճանապարհին բռնի կերպով առել էր: Իր ձին, ինչպէս ինքն ասում էր, ճանապարհին սատկել էր, որովհետև այնքան քշել էր նրան:

Քիչ զրոյց անելուց յետոյ նա պտակեց հանգստանալու, բայց յոգնածութիւնից խոր քնի մէջ ընկաւ: Մինչդեռ նա հանգիստ մրափում էր, ես նայեցի նրա երեսին և մտածեցի

*) Գործիկները կնքում են իրանց նամակները մի տեսակ մածուցիկ խմորով որ բոպէապէս կպչում է և երբ թացացնում են՝ բացում է:

մի օյին հանել նրա գլխին: Եւ գիտէի բանաստեղծի ամբողջ պատմութիւնը, ուստի վճռեցի առաջինը լինել նրա ազատման լուրը Թէհրան հասցնողը: Ձգուշութեամբ վերցնելով նամակների թաշկիւնակը որ դեռ նրա գոգումն էր, բաց արի և վերցրրի նազիրին ուղղուած նամակը, ծոցս դրի և հեծնելով նրա ձին՝ քշեցի բոլոր ուժով: Քշելու ժամանակ ես մտածում էի թէ ինչ հնարքներով ինձ ներկայացնեմ բանաստեղծի գերպատանին և ինչ խօսքերով կարողանամ նրանցից ստանալ այն վարձատրութիւնը որ սուրհանդակը պիտի ստանար: Մտածեցի այնքան սրարշաւ գնալ որ գոնէ մէկ օր սուրհանդակից առաջ հասնել Թէհրան, թէև ես գիտէի որ նա այնքան էլ շուտով չէր կարող հասնել այնտեղ: Գուցէ նա ճանապարհին կարողանար մի ձի ձեռք բերել, բայց նրա պէս ոտով քայլողին սով կը վրստահանար մի ձի փոխ տալ կամ վաճառել:

Վերջապէս ես վճռեցի Թէհրան հասնելուս պէս ձին ծախել իր բոլոր պարագաներով հանդերձ, յետոյ փոխել իմ դէրվիշական շորերը, հագնուել որպէս մի Թէհրանցի և այնպէս ձևացնել իրր թէ հէնց նոր երկար ճանապարհորդութիւնից յետոյ քաղաքն եմ հասել. այդ անելուց յետոյ գնալ բանաստեղծի տան դուռը և այնտեղ շատ բաներ պատմել նրա մասին:

ԳԼ. ԺԵ.

Հացի Բաշան հասնում է Թէհրան եւ գնում է բանաստեղծի տունը:

Մի առաւօտ արևածագից առաջ ես հասայ Թէհրանի Շահ Աբգոլ ազիմ կոչուած դուռը ճիշտ այն ժամանակ՝ երբ գիշերապահը բանում էր դուռը: Եւ իսկոյն ներս մտայ քաղաք և այդ մեծ դրան մօտ գտնուող բազարում՝ ի ցոյց դրի իմ ձին ծախելու համար: Որչափ կարողացայ, իմ ձիու լաւ կողմերը նկարագրեցի որպէսզի լաւ գին տային ինձ. բայց մի մարդ որ այնտեղ ձիու առևտրով էր պարապում, և որին ես ցոյց տուի ձիս, իսկոյն այնքան պակասութիւններ ցոյց տուեց նրա վրայ, որ ես մտածեցի բախտաւոր մարդ համարել ինձ եթէ յաջողուէր մի քանի թումանով ծախել նրան:

—Այդ ձին չափ է, ասաց նա. արլէհ ունի, ծեբ է, ատամները բոլորն էլ այրուած են, մի խօսքով քո ձին ունի այն բոլոր պակասութիւնները որ մի ձի չպէտք է ունենայ:

Այս բոլոր պակասութիւնները մատնանիշ անելուց յետոյ ես շատ զարմացայ որ նա առաջարկեց 5 թումանով գնել ձիուս այն պայմանով որ սանձն ու թամբն էլ իրան տայի:

Նա էլ շատ զարմացաւ երբ տեսաւ որ իր առաջարկը ես խկոյն ընդունեցի:

Նա հանեց իր քսակը և 5 թումանի կէսը համրեց իմ ձեռքը, և միւս կէսի փոխարէն՝ նա առաջարկեց ինձ ընդունել շունչը կտրուած մի էշ, սակայն ես չընդունեցի, և նա խոստացաւ մնացորդ փողը մի ուրիշ անգամ տալ ինձ: Ես այնքան շտապում էի, որ էլ չուզեցի սպասել նրա հետ երկար խօսելու. ուստի թողնելով նրան՝ գնացի բազարը, գնեցի մի սև գլխարկ և ինձ պատրաստելով իբրև հէնց նոր թէչրան հասնող մի ճանապարհորդ՝ քայլերս ուղղեցի դէպի բանաստեղծի տունը, որ ընկած էր քաղաքի մի լաւ կողմում՝ շրջապատուած պարտէզներով:

Հասայ նրա տան դուռը, քիչ սպասեցի, ահանջ դրի, ոչինչ ձայն-ձունչ չկար: Տան ներքին դռութիւնը ցոյց էր տալիս որ տէրը բացակայ էր, որովհետև երբ ներս մտայ, ոչ մի ընակչի նշանաբան չկար այնտեղ: Բարձրանալով վերնայարկը որ նայում էր փողոցի վրայ, ես տեսայ մի 50 տարեկան մարդ նստած մի գորգի վրայ. նա ծխում էր դայլանը. նրա տեսքից երևաց որ նա հէնց այն մարդն էր որին ես ուզում էի տեսնել: Նա բանաստեղծի նազիրն էր, նրան տեսնելուս պէս ես բացազանչեցի.

— Ողջոյն ձեզ, բարի լուր եմ բերել ձեզ համար, աչքդ լոյս, խանը գալիս է:

— Ծանի չէ՞ (այդ ի՞նչ ես ասում), զարմանքով հարցրեց նա. ի՞նչ խան, ձրտեղ, Էրբ, Ռվ, ի՞նչ:

Մի քանի բացատրութիւններ տալով՝ ես նրան յանձնեցի իրան ուղղուած նամակը, որ ստանալուն պէս նա մի տեսակ կեղծ ուրախութիւն արտայայտեց, թէև ինձ պարզ երևաց որ նրա սիրտը դառնացաւ և երկիւղի մէջ ընկաւ:

— Բայց դու հաստատ ես որ խանը կենդանի է:

— Այո, հաստատ եմ, նա կենդանի է, և դուք կը տեսնէք որ վաղը կամ միւս օրը մի ուրիշ սուրհանդակ կը հասնի որ ձեզ աւելի մանրամասն լուրեր կտայ նրա մասին և կը յանձնի ձեզ նամակներ՝ ուղղուած Շահի վեզիրին ու ուրիշներին:

Յետոյ նա սկսեց անկապ բացազանչութիւններ անել.

— Այս ի՞նչ զարմանալի բան է... վայ... այս ի՞նչ հող եկաւ մեր գլխին... հիմա ձրտեղ գնամ... ապա ես ի՞նչ անեմ, ի՞նչ ցեխ տամ գլխիս:

Ես աշխատեցի նրանից հասկանալ թէ ի՞նչ էր նշանակում իր յուզմունքը, կամ թէ ինչո՞ւ նա տխրեց փոխարէն ուրախանալու:

—Նա մեռած է, ասաց նա տխրագին ձայնով, ամեն մարդ-ասոււմ է որ նա մեռած է... նրա կինն էլ վերջերս երազում տեսել է, որ իր ամենամեծ առամն ընկել էր: Ուստի կասկած չկայ որ նա մեռած է: Բացի դրանից, Շահն էլ համոզուելով որ նա մեռած է, արդէն կարգադրութիւններ է արել նրա տան և ստացուածքի վերաբերմամբ: Օ՛, նա մեռած է, նա չէ կարող կենդանի լինել:

—Լաւ, ասացի ես, թող նա մեռած լինի, բայց ես ասում եմ որ վեց օր սրանից առաջ նա Աստառաբաղի ճշմարիտ հաւատացեալների մէկն էր և մի շաբաթից յետոյ նա Թէհրանում կը լինի:

Բաւական մտածելուց յետոյ նազիրն ասաց.

—Դու չես զարմանալ իմ շփոթութեան և յուզմունքի վերայ, երբ ես քեզ բացատրեմ այս տան դրութիւնը: Շահը լքեսելով որ Աքէր խան բանաստեղծը վախճանուել է, գրաւել է նրա բոլոր ստացուածքը: Նրա տունը, կահ-կարասիքը, կենդանիները և վրացուհի գերիները պիտի արուեն Քուռ Ալի Միրզային որ Շահի կրտսեր որդին է: Նրա գիւղն էլ արդէն արուել է մեծ վէզիրին, և նրա պաշտօնը յանձնուելու է Միրզա Ֆուզուլին: Նրա կինն արդէն ամուսնացել է իր որդու ուսուցչի հետ: Ասա, ուրեմն, ես իրաւունք ունեմ շփոթուելու և յուզուելու թէ չէ:

—Իրաւունք ունիք, ասացի ես. բայց ի՞նչ ես ասում իմ վարձատրութեան մասին:

—Վարձատրութիւն. 6, այդ մասին ոչինչ չպիտի յուսաս ինձանից, որովհետեւ ինձ համար ուրախ լուր չես բերել: Դու կարող ես պահանջել քո վարձն իմ աղայից երբ նա կը գայ. ես քեզ ոչինչ չեմ կարող տալ:

Յուսահատ սրտով մնաս բարով ասացի նազիրն՝ խոստանալով մի ուրիշ օր կրկին այցելել նրան և հեռացայ:

ԳԼ. ԺԳ.

Հաջի Բարան ծրպիր է պատրաստում ապագայի համար:—Նա կուի մէջ է ընկնում:

Ես մտածեցի սպասել բանաստեղծի վերադարձին, յուսալով նրա միջնորդութեամբ մի գործ բռնել ապրուստս պատուաւոր կերպով հայթհայթելու համար: Այնքան խարդախութիւններ էի արել որ զգուել էի, ուստի վճռեցի մի ազնիւ միջոցով սկսել մի նոր կեանք: Ես ձանձրացել էի ստոր և լիբը մարդկանց ընկերակցութիւնից: Ես տեսնում էի այնպիսի մարդիկ,

որոնք թէև շատ ստոր ընտանիքից՝ սակայն մեծ յարգանք ու պատիւ էին վայելում—հարուստ էին, փառաւոր կեանք էին վարում: Ըն՝ս ինչո՞ւ չեմ կարող այդպիսիների աստիճանին համեմել», մտածեցի ես: Ես այնքան հեռու գնացի իմ մտածմունքների և երևակայութիւնների մէջ, որ սկսեցի խորհել թէ ինչպէս պիտի վարուեմ երբ մեծ վէպեր դառնամ:

«Ո՞վ է Իսմայիլ բէգ Թէլային, որ այժմ այդքան մեծ սէր ու շնորհ է վայելում Շահի առջև: Չէ՞ որ նա սկզբում մի սոսկ Ֆէրրաշ էր: Ինչո՞վ է նա առաւել ինձանից. գեղեցկութեամբ, ջիւանութեամբ, խելքով. ո՞չ, ո՞չ մէկով: Թող մեր երկուսիս ձիւարժութիւնն էլ փորձեն, և ես որ այդ բանի մէջ լաւ կրթուել եմ թիւրքմէնների մէջ եղածս ժամանակ, ցոյց կը տամ նրան թէ ձի հեծնելն ի՞նչ է: Ո՞վ է արքունի գանձապետը, որ այժմ ոսկու հետ է խաղում, որ Շահի սնդուկները լցնում է ոսկով և միւսոյն ժամանակ չէ մոռանում լցնել իրանը: Միթէ նա ո՞վ է: Եթէ ես մի սափրիչի որդի եմ, նա բաղկալի որդի է: Այստեղ երկուսիս աստիճանն էլ հաւասար է. սակայն ես այն առաւելութիւնն ունիմ որ լաւ գրել-կարդալ գիտեմ, այն ի՞նչ նորին գերազանցութիւնը, ինչպէս ամեն մարդ կը վկայէ, ոչինչ չգիտէ: Նա ուտում, խմում է ի՞նչ որ սիրտն է ուզում, ամեն օր մի ձեռք նոր զգեստ է հագնում, Շահի պէս՝ պարսիկ գեղեցկուհիներին ընտրում է իրան համար, և այս բոլորը նա անում է առանց ունենալու իմ շնորքի և ընդունակութեան կէսը»:

Այսպիսի մտածմունքների մէջ խորասուզուած՝ ես անցընում էի փողոցով, երբ մի սաստիկ կուխի ձայն լսեցի: Ես կանգ առայ տեսնելու թէ ինչ է պատահել: Մօտեցայ կուղիներին և տեսայ այն սուրհանդակին որին ես խաբել էի, և մի գիւղացի որ կուռում էր այն մարդու հետ, որին ծախել էի իմ ձին:

Այս իմ ձին է, ասում էր գիւղացին:

—Այս իմ թամբն է ասում էր սուրհանդակը:

—Դրանք իմն են, բղաւում էր ձի գնողը:

Տեսնելով որ եթէ ես այնտեղ կանգնէի, բանս վատ կը գնար, մտածեցի իսկոյն փախչել. բայց ձի գնողը յանկարծ տեսաւ ինձ և յարձակուելով վրաս՝ բռնեց գօտուցս և քաշ տալով գոռաց.

—Տեսէք, տեսէք, անհ այս է այն մարդը, որից ես գնեցի ձին:

Հէնց որ սուրհանդակը ճանաչեց ինձ, էլ պիտի միայն երևակայել թէ ինչ եղաւ իմ դրութիւնը: Գո՞ղ, աւագակ, խար-

դախ, խարերայ, լիրբ, անամօթ և այսպիսի հաճոյանքները կարկուտներ տեղացին գլխիս:

— Ո՞րտեղ է ձիս, կատաղած հարցնում էր մէկը:

— Թամբս ետ տուր, պահանջում էր միւսը:

— Փողս շուտ ետ վճարիր, բղաւում էր երրորդը:

— Դրանք քարշ տուէք դատաւորի մօտ, ասում էր ամբոխը: Ես բղաւեցի, պողացի, երդուեցի, խրոխտացի, բայց ի՞նչու. ո՞չ որ լսող չկար ինձ: Սուրհանդակի զարոյթը անգսպելի էր, գիւղացին գանգատուում էր սուրհանդակի դէմ, ձի առնողը՝ ինձ դէմ որ գողացած ձի էին ծախել իրան և այժմ այդ ձին էլ իր ձեռքից առել էին: Ո՛չ մէկս միմիանց լեզու չէինք հասկանում: Ես սկսեցի մէկի հետ քաղցրութեամբ խօսել, միւսին շողոքորթել, երրորդին սպառնալիքներ տալ, յուսալով որ այդ եղանակով մի կերպ վերջ կը տայի վէճին:

Սուրհանդակին ասացի.

— Ինչո՞ւ ես այդքան բարկացել. այստեղ է քո թամբը, էլ ի՞նչ ես ասում.

Գիւղացուն ասացի.

— Դու ի՞նչ կ'անէիր եթէ այս ձին սատկած լինէր. շնորհակալ եղիր Ալլահից և քո ձին հեծի՞ր ու գնա:

Դալով ձի գնողին, էլ խօսք չմնաց որ չասացի նրան: Ես ուղեցի նրա տուած փողը վերադարձնել իրան, բայց նա չընդունեց: Բանից դուրս եկաւ որ նա ինձանից առնելէք ունէր, որովհետեւ նա պահանջում էր ձիու ծախքը որ մի քանի օր աւել էր:

Մեր վիճաբանութիւնը շատ սուր կերպարանք ստացաւ, և ստիպուեցինք դառողայի մօտ գնալ: Նա նստած էր բազարում՝ շրջապատուած իր ֆէրրաշներով, որոնք իրանց երկար ճիպտաներով պատրաստ էին ֆալախկայի մէջ դնելու որևէ յանցաւորի ոտներ, հէնց որ իրանց աղան հրամայէր: Դառուղան չկարողացաւ մի վճիռ տալ, որովհետեւ մեր դատը նրա համար շատ բարդ էր: Հետևապէս նա մեզ առաջարկեց մեծ դատաւորի մօտ գնալ, սակայն մի ծերունի որ այնտեղ կանգնած էր, միջամտելով՝ ասաց նրան.

— Ինչո՞ւ էք շուարում այդպիսի մի պարզ խնդրի վրայ: Խնդիրը շատ պարզ է: Երբ ձի գնողը կը վճարէ հաջուն իր խոստացած փողը, այսինքն՝ ձիու գնի կէսը որ դեռ չէ հատուցել, այն ժամանակ հալին էլ կը տայ նրան ձիու մի քանի օրուայ ծախքը որ նա պահանջում է:

— Բարիքալլա՛, բարիքալլա՛, գոչեցին դառուղան և նրան շրջապատողները: Շատ լաւ է ասում ծերունին, շատ լաւ:

Նրանք բոլորն էլ այնքան զարմացան ծերունու տուած վճռի վրայ և այնքան հաւանեցին այդ վճիռը, որ դառուղան արձակեց մեզ և պատուիրեց որ գործին խաղաղութեամբ վերջ տանք:

Ես իսկոյն ետ տուի ձի գնողին իր փողը—հինգ թումանի կէսը ի դիմաց ձիու ծախքին որ նա արել էր մի քանի օր, իսկ նրանից ստացայ ամբողջ 5 թումանը: Բանը վերջանալուց յետոյ նա նոր հասկացաւ որ խարուել էր, բայց էլ ի՞նչ կարող էր անել: Սկզբում նա չէր հասկանում որ եթէ ինքն իրաւունք ունէր ձիու մի քանի օրուայ պահուածքի ծախքն առնել, ինչո՞ւ իրաւունք չունէր նրան տէր դառնալ: Այս էլ վերջն հասկացաւ. բայց արդէն շատ ուշ էր: Բարկացաւ, կատաղեց, բայց ո՛չ ինձ վրայ, այլ դառուղայի, որին նա համարձակ կերպով դատապարտեց իբրև մի անխելք, անշնորհք, ապուշ մարդու որ այնքան տգէտ էր օրէնքի մէջ, որքան ինքը խաբեբայ էր գործի մէջ:

ԳԼ. ԺԷ.

Հաջի Բարան նոր շորեր է հագնում.—Նա գնում է բաղնիք:—Դուրս է գալիս բոլորովին փոխուած արտաքինով:

Այս խաթա-բալայից ազատուելուց յետոյ ես գնացի բազարը և հասնելով մի մահուդեղէնի խանութ, հարցրի կարմիր մահուդի գինը: Սանութպանը գննելով ինձ օտից մինչև գլուխ՝ հարցրեց.

—Ո՞ւմ համար կամ ինչի՞ համար ես ուզում կարմիր մահուդը:

—Հէնց ինձ համար, ուզում եմ մի քարոննի կարել:

—Քե՞զ համար, հարցրեց նա զարմացմամբ:

—Այո՛, այո՛, հէնց ինձ համար. ինչպէ՞ս ես տեսնում ինձ:

—Քե՞զ համար. բայց ըեզ պէս մի սատանի ձագ սրտեղից է կարող վճարել մահուդի գինը: Միայն միրզաներն ու խաներն են հազնում մահուդէ քարոննի, բայց դու ո՛չ ես ես, ո՛չ խան:

Ես պատրաստուում էի մի խիստ պատասխան տալ նրան, բայց հէնց այդ բողբոջին իմ ուշադրութիւնը գրաւեց մի դալլալ *) որ իր ուսի վրայ ձգած ունէր զանազան հին կամ հագած շորեր: Ուստի առանց խօսք ասելու խանութպանին՝ հեռացայ

*) Դալլալ նշանակում է միջնորդ: